«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին մասին համախմբված հաշվետվություն	9
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի («Ընկերություն») և վերջինիս դուստր ընկերությունների («Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ. և նշված ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նշված ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (*ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի պահպանման մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ նշում

Խմբի 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նշված ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2022թ. հունիսի 23-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը, երբ առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

  գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը:

- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին.

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Կարեն Սաֆարյան
Տնօրեն, Աուդիտի բաժնի

Գոհինա Գևորգյան
Ղեկավար գործընկեր
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեր

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
23 մայիսի 2023թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն առ 31 դեկտեմբերի 2022թ.

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	15	210,281,310	219,099,509
Մակաբացման գործունեության ակտիվ	16	20,219,211	7,726,290
Պաշարներ	19	28,993,970	21,110,939
Ոչ նյութական ակտիվներ		321,440	288,418
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բաժնային գործիքներ		611,287	550,078
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	17	14,590,344	5,653,671
Փոխհատուցվող ԱԱՀ		140,294	187,690
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		260,224	239,680
Ոչ ընթացիկ ակտիվներ		**275,418,080**	**254,856,275**
Պաշարներ	19	29,568,730	25,312,764
Կանխավճարներ այլ հարկերի գծով		2,534,883	2,256,513
Պետական բյուջեից ստացվելիք ռոյալթի	20	6,106,168	-
Փոխհատուցվող ԱԱՀ		3,563,759	3,548,122
Հետաձգված ԱԱՀ		243,455	336,076
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	21	37,333,194	19,483,108
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	17	6,304,003	3,657,731
Տրամադրված փոխառություններ	18	33,831,352	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ	22	21,548,194	35,720,938
Ավանդներ բանկերում	23	7,866,619	18,484,982
Այլ ընթացիկ ակտիվներ		11,574	29,769,807
Ընթացիկ ակտիվներ		**148,911,931**	**138,570,041**
Ընդամենը ակտիվներ		**424,330,011**	**393,426,316**
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	24	54,966,680	54,966,680
Էմիսիոն եկամուտ	24	18,167,106	18,167,106
Չբաշխված շահույթ		228,246,873	131,491,940
Ընդամենը սեփական կապիտալ		**301,380,659**	**204,625,726**
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	27	28,875,933	33,023,964
Պահուստներ	26	3,621,700	3,966,398
Հետաձգված հարկային պարտավորություններ	14	10,622,137	8,634,048
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**43,119,770**	**45,624,410**
Թողարկված պարտատոմսեր	25	-	26,484,802
Վարկեր և փոխառություններ	27	33,457,269	43,688,959
Պահուստներ	26	2,821,836	20,545
Վարձակալության գծով պարտավորություններ		-	222,291
Պայմանագրի գծով պարտավորություններ	29	10,984,503	17,015,759
Վճարվելիք շահութահարկ		10,511,389	18,770,951
Վճարվելիք ռոյալթի		-	15,707,343
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	28	19,703,366	17,712,496
Այլ պարտավորություններ		2,351,219	3,553,034
Ընթացիկ պարտավորություններ		**79,829,582**	**143,176,180**
Ընդամենը պարտավորություններ		**122,949,352**	**188,800,590**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**424,330,011**	**393,426,316**

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 59-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 2022թ. համար

հազ. դրամ	Ծնթգ.	2022թ.	2021թ.
Հասույթ	6	358,163,585	342,063,978
Վաճառքի ինքնարժեք	7	(129,254,790)	(124,565,517)
Համախառն շահույթ		**228,908,795**	**217,498,461**
Իրացման ծախսեր	8	(7,147,513)	(8,980,181)
Վարչական ծախսեր	9	(17,719,899)	(15,598,795)
Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին	10	(6,466,399)	(5,625,835)
Այլ եկամուտ		560,199	724,626
Այլ ծախսեր	11	(77,263,322)	(63,215,659)
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	21	(576,653)	(2,149,547)
Գործառնական գործունեության արդյունքներ		**120,295,208**	**122,653,070**
Զուտ վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով		-	(823,883)
Օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրման գծով		61,209	(95,965)
Ֆինանսական եկամուտ	12	2,813,411	545,054
Ֆինանսական ծախսեր	12	(6,436,665)	(14,775,715)
Զուտ (կորուստ)/օգուտ փոխարժեքային տարբերություններից		(563,119)	10,232,169
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		**116,170,044**	**117,734,730**
Շահութահարկի գծով ծախս	14	(19,825,153)	(23,106,199)
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		**96,344,891**	**94,628,531**

Հաստատվել և ստորագրվել է Խմբի ղեկավարության կողմից 2023թ. մայիսի 23-ին:

Ռոման Խուդոլի
Գլխավոր տնօրեն

Թովմաս Մելիքյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 59-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 2022թ. համար

հազ. դրամ	Կանոնադրական կապիտալ	Հետգնված բաժնետոմսերի գծով պահուստ	Չբաշխված շահույթ	Էմիսիոն եկամուտ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	54,966,680	(41,225,060)	3,359,596	-	17,101,216
Ընդամենը համապարփակ եկամուտ					
Շահույթ տարվա համար	-	-	94,628,531	-	94,628,531
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	**-**	**-**	**94,628,531**	**-**	**94,628,531**
Գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ					
Հետգնված բաժնետոմսերի տեղաբաշխում (Ծնթգ. 24)	-	41,225,060	33,913,855	18,167,106	93,306,021
Հայտարարված շահաբաժիններ	-	-	(410,042)	-	(410,042)
Ընդամենը գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ	**-**	**41,225,060**	**33,503,813**	**18,167,106**	**92,895,979**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**54,966,680**	**-**	**131,491,940**	**18,167,106**	**204,625,726**
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	54,966,680	-	131,491,940	18,167,106	204,625,726
Ընդամենը համապարփակ եկամուտ					
Շահույթ տարվա համար	-	-	96,344,891	-	96,344,891
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	**-**	**-**	**96,344,891**	**-**	**96,344,891**
Գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ					
Հայտարարված շահաբաժինների չեղարկում (Ծնթգ. 24)	-	-	410,042	-	410,042
Ընդամենը գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ	**-**	**-**	**410,042**	**-**	**410,042**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**54,966,680**	**-**	**228,246,873**	**18,167,106**	**301,380,659**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 59-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 2022թ. համար

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	**116,170,044**	**117,734,730**
Ճշգրտումներ՝ մինչև հարկումը շահույթը զուտ դրամական հոսքերի հետ համադրելու համար		
Մաշվածություն և ամորտիզացիա	21,639,569	19,524,934
Արժեզրկումից կորուստներ/արժեզրկման (հակադարձում)	1,079,149	1,176,374
Օգուտ/(վնաս) հիմնական միջոցների օտարումից	-	(39,242)
Զուտ (օգուտ)/կորուստ փոխարժեքային տարբերություններից	563,119	(10,232,169)
Անկանխիկ վաճառք	(14,259,214)	(15,745,389)
Տարվա ընթացքում պահուստի օգտագործում	2,059,719	(683,712)
Պաշարների արժեքի նվազեցում	(18,387)	1,251,238
Վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրման գծով	(61,209)	95,965
Պարտքային կորուստների գծով ծախսեր	576,653	2,149,547
Զուտ ֆինանսական եկամուտ	3,623,254	14,230,661
Շրջանառու կապիտալի ճշգրտումներ		
Պաշարների աճ	(12,120,610)	(10,720,289)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի աճ	(28,350,573)	(7,606,470)
Կանխավճարների աճ	(3,982,310)	(10,642,895)
Այլ հարկերի գծով կանխավճարների նվազում/(աճ)	131,673	(1,809,393)
Փոխհատուցվող ԱԱՀ-ի նվազում/(աճ)	31,760	(1,915,319)
Հետաձգված ԱԱՀ-ի նվազում/(աճ)	92,620	(227,461)
Այլ ընթացիկ ակտիվների աճ	(19,489)	(283,179)
Առևտրական կրեդիտորական պարտքերի աճ/(նվազում)	2,567,625	(24,909,858)
Պայմանագրի գծով պարտավորությունների աճ/(նվազում)	1,093,076	(2,906)
Այլ ֆինանսական պարտավորությունների (նվազում)/աճ	(603,242)	2,414,348
Վճարվելիք ռոյալթիի (նվազում)/աճ	(21,813,511)	15,346,784
Պահուստների նվազում	-	(634,025)
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների նվազում	-	(591,905)
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից՝ մինչև շահութահարկի վճարումը	**68,399,716**	**87,880,369**
Վճարված շահութահարկ	(26,096,626)	(10,944,178)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական հոսքեր	**42,303,090**	**76,936,191**
Ներդրումային գործունեություն		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(24,945,996)	(21,287,938)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(122,127)	(13,954)
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից	-	39,242
Ներդրումներ մակաբացման գործունեության ակտիվում	(12,492,921)	(1,967,057)
Ստացված շահաբաժիններ	46,054	59,214
Ավանդների տեղաբաշխում բանկերում	(16,500,000)	(18,000,000)
Մուտքեր բանկային ավանդներից	27,100,000	-
Մուտքեր տրամադրված փոխառություններից	(33,953,175)	2,700
Ստացված տոկոսներ	1,638,682	60,073
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր	**(59,229,483)**	**(41,107,720)**
Ֆինանսավորման գործունեություն		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	77,451,497	5,410,071
Վարկերի և փոխառությունների մարում	(66,597,958)	(46,634,671)
Թողարկված պարտատոմսերի մարում	(24,000,097)	(14,108,479)
Մուտքեր հետգնված բաժնետոմսերի տեղաբաշխումից	27,629,671	63,820,681
Վարձակալության գծով պարտավորությունների վճարում	(238,700)	(260,399)
Վճարված տոկոսներ	(3,913,871)	(11,192,740)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ֆինանսավորման գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական հոսքեր	**10,330,542**	**(2,965,537)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(6,595,851)**	**32,862,934**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	35,720,938	4,327,215
Արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(7,576,893)	(1,469,211)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի (Ծնթգ. 22)	**21,548,194**	**35,720,938**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 59-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ծանոթագրություն	Էջ
1. Հաշվետու կազմակերպություն	11
2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ	12
3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ	12
4. Գնահատումների և դատողությունների օգտագործում	12
5. Սեգմենտային հաշվետվություններ	14
6. Հասույթ	14
7. Վաճառքի ինքնարժեք	15
8. Իրացման ծախսեր	15
9. Վարչական ծախսեր	16
10. Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին	16
11. Այլ ծախսեր	16
12. Ֆինանսական եկամուտ/(ծախսեր)	17
13. Անձնակազմի գծով ծախսեր	17
14. Շահութահարկ	17
15. Հիմնական միջոցներ	20
16. Մակաբացման գործունեության ակտիվ	21
17. Կանխավճարներ	21
18. Տրամադրված փոխառություններ	21
19. Պաշարներ	22
20. Պետական բյուջեից ստացվելիք ռոյալթի	22
21. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	22
22. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24
23. Ավանդներ բանկերում	24
24. Կապիտալ և պահուստներ	24
25. Թողարկված պարտատոմսեր	25
26. Պահուստներ	26
27. Վարկեր և փոխառություններ	28
28. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	30
29. Պայմանագրի գծով պարտավորություններ	30
30. Իրական արժեք և ռիսկերի կառավարում	31
31. Կապիտալ հանձնառություններ	38
32. Պայմանական դեպքեր	38
33. Գործառնական ռիսկեր	40
34. Կապակցված կողմեր	41
35. Չափման հիմունքներ	42
36. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր	42
37. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	58

1. Հաշվետու կազմակերպություն

(ա) Հայաստանի գործարար միջավայրը

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Չնայած հրադադարի մասին համաձայնագրի, Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերը ներքաշվել են սահմանային բախման մեջ, ինչն իր հերթին մեծացրել է անորոշությունը գործարար միջավայրում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(բ) Կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն («Ընկերություն») և իր դուստր ընկերությունը՝ «Լեռ-Էքս» ՍՊԸ-ն («Դուստր ընկերություն»), միասին կազմելով Խումբ («Խումբ») հանդիսանում են փակ բաժնետիրական ընկերություն և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն: Խումբը հիմնադրվել էր որպես պետական ձեռնարկություն 1952թ-ին: 2005թ. հունվարի 1-ին Խումբը սեփականաշնորհվեց կառավարության 2004թ. դեկտեմբերի 9-ի թիվ 1677-Ա որոշման համաձայն:

Խմբի հիմնական գործունեության փաստացի վայրը և իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, Քաջարան, Լեռնագործների փող. 18

Խմբի հիմնական գործունեությունը հանքարդյունաբերությունն է, պղնձի և մոլիբդենի խտանյութի արտադրությունը: Պատրաստի արտադրանքը իրացվում է պղնձի և մոլիբդենի խտանյութի, ֆերոմոլիբդենի տեսքով: Խմբի գործունեությունը կարգավորվում է Խմբի և Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության միջև կնքված Լիցենզիայի պայմանագրերով («Լիցենզիայի պայմանագրեր»): Լիցենզիայի պայմանագրերի համաձայն՝ Խմբի գործունեությունը լիցենզավորված է մինչև 2041թ.:

2021թ. ընթացքում Խմբի բաժնետոմսերի 60%-ը Խմբի կողմից վաճառվել է «Պրոմիշլեննայա Կոմպանիա» ԲԸ-ին: Խումբը ստացել է վճարումը 2021թ. չորրորդ եռամսյակում: Հետագայում «Պրոմիշլեննայա Կոմպանիա» ԲԸ-ն Խմբի բաժնետոմսերի 15%-ը նվիրաբերել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը: 2021թ. նոյեմբերին Խմբի բաժնետոմսերի 15%-ը վաճառվել է «Ուրբանեվենտ պլյուս» ՍՊԸ-ին: Խումբը ստացել է վճարումը 2022թ-ին:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի բաժնետերերի կազմը հետևյալն է. «ԱՄՓ Հոլդինգ» ՍՊԸ (5.625%), «Զանգեզուր Մայնինգ» ՍՊԸ (12.5%), «Պրոմիշլեննայա Կոմպանիա» ԲԸ (45%), Հայաստանի Հանրապետություն (21.875%), «Ուրբանեվենտ պլյուս» ՍՊԸ (15%) («Բաժնետերեր»):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի բաժնետերերի կազմը հետևյալն էր. «ԱՄՓ Հոլդինգ» ՍՊԸ (12.5%), «Զանգեզուր Մայնինգ» ՍՊԸ (12.5%), «Պրոմիշլեննայա Կոմպանիա» ԲԸ (45%), Հայաստանի Հանրապետություն (15%), «Ուրբանեվենտ պլյուս» ՍՊԸ (15%) («Բաժնետերեր»):

Կապակցված կողմերի հետ գործարքների մասին տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 34-ում:

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները.

Դուստր ընկերություն	Գրանցման երկիր	2022թ. Սեփականություն/ Ձայնի իրավունք	2021թ. Սեփականություն/ Ձայնի իրավունք	Գործունեության բնույթը
«Լեռ-Էքս» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	100%	Հանքարդյունաբերություն

2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ

Համապատասխանության հավաստում

Ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը Ընկերության և Խմբում համախմբված յուրաքանչյուր ընկերության ֆունկցիոնալ արժույթն է և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան կազմելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները պարբերաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 36 (բ) – հասույթի ճանաչում,
- Ծանոթագրություն 36 (գ) – ռոյալթիի գծով ծախսի դասակարգում,
- Ծանոթագրություն 36 (ը) և Ծանոթագրություն 16 – հանքաքարի բաղադրիչների և թափոնների ծավալի որոշում,
- Ծանոթագրություն 19 – երկարաժամկետ պաշարների դասակարգում:

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում

- Ծանոթագրություն 4 (ա) – հանքաքարի պաշարների գնահատում և շահագործման լիցենզիայի ժամկետի երկարաձգում,
- Ծանոթագրություն 36 (ը) – հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ և թողարկված միավորների մաշվածության հաշվարկի որոշում,
- Ծանոթագրություն 26 – տեղանքի վերականգնման գծով պահուստ
- Ծանոթագրություն 36 (գ) – ռոյալթիի գնահատում,
- Ծանոթագրություն 36 (ժ) – ակտիվների վերականգման կարողություն՝ ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում,
- Ծանոթագրություն 21 – ակնկալվող պարտքային կորուստների գնահատում առևտրական դեբիտորական պարտքերի համար:

Իրական արժեքի չափում

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- *1-ին մակարդակ*. նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտվող):
- *2-րդ մակարդակ*. 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):
- *3-րդ մակարդակ*. ակտիվի կամ պարտավորության ելակետային տվյալները, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, իրական արժեքի չափումն որպես մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղափոխումները Խումբը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 30-ում՝ «Իրական արժեք և ռիսկերի կառավարում»:

(ա) Հանքաքարի պաշարներ և շահագործման լիցենզիա

Հանքաքարի պաշարների և հանքային ռեսուրսների գնահատումն իրենից ներկայացնում է հանքաքարի ծավալի գնահատումը, որը տնտեսապես և օրինական կերպով կարող է արդյունահանվել Խմբի հանքերից: Այդ պաշարների և հանքային ռեսուրսների գնահատումները և դրանց փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ Խմբի համախմբված ֆինանսական վիճակի և արդյունքների վրա հետևյալ կերպ.

- Գնահատված ապագա դրամական հոսքերի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ հիմնական միջոցների, մակաբացման գործունեության ակտիվի և հետախուզման և գնահատման ակտիվների հաշվեկշռային արժեքների վրա,
- Շահույթի կամ վնասի և այլ համախարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված մաշվածության և ամորտիզացիայի գումարները կարող են փոխվել, եթե այդ փոփոխությունները որոշվեն կիառելով թողարկված արտադրանքի մեթոդը կամ եթե փոխվի համապատասխան ակտիվների օգտակար ծառայության ժամկետը,
- Կապիտալացված մակաբացման ծախսումները, որոնք ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվում են որպես հիմնական միջոցների, այլ ոչ ընթացիկ ակտիվների կամ պաշարների մաս կամ ծախսագրվում են շահույթում կամ վնասում, կարող են փոխվել մակաբացման հարաբերակցության գործակիցների փոփոխության արդյունքում:
- Տեղանքի վերականգնման և բնապահպանության գծով պահուստները կարող են փոխվել, եթե պաշարների գնահատված ծավալների փոփոխությունը ազդեցություն է ունենում այդ գործողությունների սկսելու ժամկետի և այդ գործողությունների հետ կապված ծախսերի վրա,
- Շահութահարկի գծով հետաձգված ակտիվների ճանաչումը և հաշվեկշռային արժեքը կարող են փոխվել այդ ակտիվների առկայության վերաբերյալ դատողությունների և հավանական վերականգնումների գնահատումների փոփոխությունների արդյունքում:

Խումբն իր գործունեությունն իրականացնում է մինչև 2041թ. գործող Լիցենզիայի շրջանակում՝ համաձայն 2012թ. նոյեմբերի 27-ի թիվ PV-232 Լիցենզիայի պայմանագրի: Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը առաջնորդվել է այն ենթադրությամբ, որ Լիցենզիայի գործողության ժամկետը կերկարաձգվի 2041թ-ից հետո: Այս ենթադրությունը հիմնված է Ընդերքի մասին օրենսգրքի դրույթների վրա, համաձայն որոնց Լիցենզիայի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել ներկայացված դիմումի հիման վրա: Բացի այդ, Խումբը ստացել է «Golder Associates»-ի կողմից հրապարակված՝ JORC-ի պահանջներին համապատասխանող հանքային ռեսուրսների պաշարների գնահատման NI43-101 հաշվետվությունը 2015թ. հոկտեմբերի դրությամբ:

Խումբն օգտագործում է վերոնշյալ գնահատումները տեղանքի վերականգնման ծախսերի ժամկետները, հիմնական միջոցների, մակաբացման գործունեության ակտիվի և հետախուզման և գնահատման ակտիվների օգտակար ծառայության ժամկետները և արժեզրկումը գնահատելու համար:

5. Սեգմենտային հաշվետվություններ

Գործառնական սեգմենտը Խմբի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Խմբի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Ղեկավարությունը գտնում է, որ Խումբը բաղկացած է մեկ գործառնական սեգմենտից, քանի որ Խմբի Խորհուրդը վերահսկում է Խմբի գործառնական արդյունքները որպես մեկ բիզնես միավոր: Գլխավոր տնօրենը համարվում է Խմբի գլխավոր գործառնական որոշում կայացնողը՝ ռեսուրսների բաշխման և կատարողականի գնահատման վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով:

6. Հասույթ

Հասույթ գնորդների հետ պայմանագրերից

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Հասույթ պղնձի խտանյութի վաճառքից	169,475,884	184,340,719
Հասույթ ֆերոմոլիբդենի վաճառքից	107,871,464	95,236,259
Հասույթ մոլիբդենի խտանյութի վաճառքից	71,768,502	55,966,743
Հասույթ բեռնափոխադրման/առաքման ծառայություններից	6,943,621	5,052,697
Այլ հասույթ	2,104,114	1,467,560
Ընդամենը հասույթ	**358,163,585**	**342,063,978**

Հասույթ խտանյութերիի և ֆերոմոլիբդենի վաճառքից

	2022թ.		**2021թ.**	
	հազ. դրամ	**Չոր մետրիկ տոննա**	**հազ. դրամ**	**Չոր մետրիկ տոննա**
Պղնձի խտանյութ	169,475,884	222,921	184,340,719	202,540
Ֆերոմոլիբդեն	107,871,464	8,560	95,236,259	7,760
Մոլիբդենի խտանյութ	71,768,502	8,397	55,966,743	7,372
	349,115,850		**335,543,721**	

Պղնձի և մոլիբդենի խտանյութերի և ֆերոմոլիբդենի վաճառքից ստացված ամբողջ հասույթը ճանաչվում է ժամանակի այն պահին, երբ փոխանցվում է ապրանքի նկատմամբ հսկողությունը (Ծանոթագրություն 36 (բ)), իսկ բեռնափոխադրման/առաքման ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայությունները մատուցելիս:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 47,894,366 հազար դրամ գումարով պայմանականորեն գնանշվող վաճառք, որը բաղկացած էր 37,870 չոր մետրիկ տոննա պղնձի խտանյութից, 536 չոր մետրիկ տոննա ֆերոմոլիբդենից և 1,891 չոր մետրիկ տոննա մոլիբդենի խտանյութից (2021թ-ին՝ 17,384,462 հազար դրամ գումարով պայմանականորեն գնանշվող վաճառք՝ բաղկացած 15,458 չոր մետրիկ տոննա պղնձի խտանյութից, 121 չոր մետրիկ տոննա ֆերոմոլիբդենից, մոլիբդենի խտանյութի վաճառք չէր եղել), որի իրական արժեքը կազմում էր մոտավորապես 60,006,099 հազար դրամ (2021թ-ին՝ 17,481,088 հազար դրամ):

7. Վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Խտանյութերի, ֆերոմոլիբդենի և սինթերված մոլիբդենի վաճառքի ինքնարժեք	127,195,415	122,968,947
Այլ վաճառքների ինքնարժեք	2,059,375	1,596,570
	129,254,790	**124,565,517**

Խտանյութերի և ֆերոմոլիբդենի վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Նյութեր	34,580,746	35,495,362
Աշխատավարձ	25,323,010	23,255,431
Վերամշակման ծախսումներ	15,735,099	15,940,788
Արտապատվիրված ծառայություններ	15,531,781	16,090,613
Մաշվածություն	15,302,844	14,367,986
Էլեկտրականություն և գազ	13,184,949	10,801,166
Փոխադրման ծախսեր	7,120,135	6,551,349
Բնապահպանական հարկ	231,073	207,516
Այլ	185,778	258,736
	127,195,415	**122,968,947**

8. Իրացման ծախսեր

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Պղնձի խտանյութի փոխադրման ծախսեր	5,115,072	6,983,915
Մոլիբդենի խտանյութի փոխադրման ծախսեր	540,662	688,844
Աշխատավարձ	188,235	148,115
Փաթեթավորման, տեսակավորման և պահպանման ծախսեր	83,280	73,380
Այլ	1,220,264	1,085,927
	7,147,513	**8,980,181**

9. Վարչական ծախսեր

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Աշխատավարձ	10,535,869	8,674,156
Աուդիտորական, խորհրդատվական և այլ մասնագիտական ծառայություններ	1,921,393	1,315,175
Գրասենյակային, կոմունալ և կապի ծառայության ծախսեր	1,562,294	1,427,714
Մաշվածություն և ամորիզացիա	963,218	967,656
Նյութեր	681,077	692,959
Ապահովագրության ծախսեր և բանկային ծառայությունների վճարներ	566,687	696,038
Տրանսպորտային ծախսեր	377,529	828,966
Վարձակալության ծախսեր	312,480	312,480
Գործուղման, վերապատրաստման և ներկայացուցչական ծախսեր	137,216	423,631
Այլ	662,136	260,018
	17,719,899	**15,598,795**

10. Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Նվիրատվության ձևով տրամադրված դրամական միջոցներ	5,904,971	5,259,452
Նվիրատվության ձևով տրամադրված հիմնական միջոցներ, պաշարներ և այլ նվիրատվություններ	561,428	366,383
	6,466,399	**5,625,835**

Խումբը հատկացումներ է կատարում տարբեր սոցիալական ծրագրերին և հաստատություններին:

11. Այլ ծախսեր

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Տուրքեր և հարկեր՝ բացառությամբ շահութահարկի*	36,347,539	11,506,348
Ռոյալթիի գծով ծախս	33,454,912	39,561,074
Կանխավճարների արժեզրկում	1,079,149	2,690,347
Աշխատավարձ	1,008,789	1,403,311
Նյութեր	1,008,482	885,958
Գործուղումներ	494,589	625,055
Տույժեր և տուգանքներ	391,588	23,675
Մաշվածություն	309,370	387,577
Հիմնական միջոցների արժեզրկում	181,487	856,876
Պարտավորության ճանաչում հոսքային պայմանագրի գծով	-	3,922,020
Պաշարների արժեքի նվազեցում	-	623,164
Այլ	2,987,417	730,254
	77,263,322	**63,215,659**

* Ծախսերն իրենցից ներկայացնում են 2021թ. սեպտեմբերի 5-ից գործող «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների համաձայն պղնձի և մոլիբդենի խտանյութերի արտահանման վրա գանձվող պետական տուրքերը:

12. Ֆինանսական եկամուտ/(ծախսեր)

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	1,195,255	12,183
Տոկոսային եկամուտ ավանդների գծով	1,113,374	484,982
Տոկոսային եկամուտ բանկային հաշիվների գծով	458,727	47,889
Այլ տոկոսային եկամուտ	46,055	-
Ֆինանսական եկամուտ	**2,813,411**	**545,054**
Տոկոսային ծախս թողարկված պարտատոմսերի, վարկերի և փոխառությունների գծով	(6,009,090)	(14,412,886)
Տեղանքի վերականգնման պահուստի գծով զեղչի ծախսագրում (Ծնթգ. 26)	(396,874)	(338,014)
Տոկոսներ ֆինանսական վարձակալության գծով	(4,838)	(24,815)
Ֆինանսական ծախսեր	**(6,410,802)**	**(14,775,715)**

13. Աննակազմի գծով ծախսեր

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Աշխատավարձ	44,139,380	40,137,719
Արձակման նպաստներ	908,653	1,310,639
	45,048,033	**41,448,358**

14. Շահութահարկ

(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Խումբը շահութահարկը վճարում է 18% դրույքաչափով (2021թ-ին՝ 18%):

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարվա շահութահարկ	17,837,064	23,770,952
	17,837,064	**23,770,952**
Հետաձգված հարկի գծով ծախս/(օգուտ)		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	1,988,089	(664,753)
	1,988,089	**(664,753)**
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**19,825,153**	**23,106,199**

Հարկի արդյունավետ դրույքաչափի համադրում

	2022թ.		2021թ.	
	հազ. դրամ	**%**	**հազ. դրամ**	**%**
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	116,170,045	100	117,734,731	100
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	20,910,608	18	21,192,252	18
Չնվազեցվող ծախսեր	-	-	1,913,947	1.6
Չհարկվող եկամուտ	(1,055,432)	(1)	-	-
	19,855,176	**17%**	**23,106,199**	**20%**

(բ) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

հազ. դրամ	**Ակտիվներ**		**Պարտավորություններ**		**Զուտ**	
	2022թ.	**2021թ.**	**2022թ.**	**2021թ.**	**2022թ.**	**2021թ.**
Հիմնական միջոցներ	-	-	(11,018,308)	(10,768,043)	(11,018,308)	(10,768,043)
Ոչ նյութական ակտիվներ	6,497	3,041	-	-	6,497	3,041
Պաշարներ	429,545	544,985	-	-	429,545	544,985
Մակաբացման գործունեության ակտիվ	-	-	(2,684,718)	(385,579)	(2,684,718)	(385,579)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	837,222	774,364	-	-	837,222	774,364
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով	216,842	-	-	-	216,842	-
Տրամադրված փոխառություններ	631,692	631,692	-	-	631,692	631,692
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	504,373	-	-	(4,655)	504,373	(4,655)
Վարկեր և փոխառություններ	-	-	(74,189)	(136,929)	(74,189)	(136,929)
Տեղանքի վերականգնման գծով պահուստ	528,907	667,064	-	-	528,907	667,064
Վարձակալության գծով պարտավորություններ	-	40,012	-	-	-	40,012
Զուտ հարկային (ակտիվներ)/ պարտավորություններ	**3,155,078**	**2,661,158**	**(13,777,215)**	**(11,295,206)**	**(10,622,137)**	**(8,634,048)**

հազ. դրամ	**Ակտիվներ**		**Պարտավորություններ**		**Զուտ**	
	2021թ.	**2020թ.**	**2021թ.**	**2020թ.**	**2021թ.**	**2020թ.**
Հիմնական միջոցներ	-	-	(10,768,043)	(10,062,485)	(10,768,043)	(10,062,485)
Ոչ նյութական ակտիվներ	3,041	3,155	-	-	3,041	3,155
Պաշարներ	544,985	439,466	-	-	544,985	439,466
Մակաբացման գործունեության ակտիվ	-	-	(385,579)	(264,646)	(385,579)	(264,646)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	774,364	271,315	-	-	774,364	271,315
Տրամադրված փոխառություններ	631,692	3,725	-	-	631,692	3,725
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-	-	(4,655)	(177,496)	(4,655)	(177,496)
Վարկեր և փոխառություններ	-	-	(136,929)	(273,622)	(136,929)	(273,622)
Տեղանքի վերականգնման գծով պահուստ	667,064	679,374	-	-	667,064	679,374
Վարձակալության գծով պարտավորություններ	40,012	82,413	-	-	40,012	82,413
Զուտ հարկային (ակտիվներ)/ պարտավորություններ	**2,661,158**	**1,479,448**	**(11,295,206)**	**(10,778,249)**	**(8,634,048)**	**(9,298,801)**

(գ) Հետաձգված հարկի մնացորդների փոփոխություններ

Հետաձգված հարկի մնացորդների բոլոր փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(դ) Չճանաչված հետաձգված հարկային ակտիվներ

Հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել հետևյալ հոդվածների գծով.

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Նվազեցվող ժամանակավոր տարբերություններ	658,689	667,403
Հարկային վնաս	162,986	165,459
	821,675	**832,862**

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն: Հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել Խմբի դուստր ընկերության նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և հարկային վնասների գծով, քանի որ անորոշ է, թե արդյոք առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց դուստր ընկերությունը կկարողանա օգտագործել այդ հոդվածներից ստացված օգուտները:

15. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Հողատարածք և շենքեր	Մեքենաներ և սարքավորումներ	Հանքարդյունաբերական շինություններ	Տնտեսական գույք	Անավարտ շինարարություն	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	75,374,168	228,155,432	923,604	1,361,229	70,999,815	888,281	377,702,529
Ավելացումներ	1,915,003	8,557,593	4,392,172	217,288	11,971,331	982	27,054,369
Օտարումներ/դուրսգրումներ	(868,235)	(1,764,518)	(475)	(6,830)	(3,717,992)	-	(6,358,050)
Տեղափոխումներ	1,886,310	8,296,240	-	-	(10,182,550)	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**78,307,246**	**243,244,747**	**5,315,301**	**1,571,687**	**69,070,604**	**889,263**	**398,398,848**
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	78,307,246	243,244,747	5,315,301	1,571,687	69,070,604	889,263	398,398,848
Ավելացումներ	7,592	9,551,329	-	169,464	9,627,507	-	19,355,892
Օտարումներ/դուրսգրումներ	(657,548)	(13,980,687)	(5,059,154)	(94,051)	(263,268)	-	(20,054,708)
Տեղափոխումներ	1,335,391	7,907,779	-	-	(9,243,170)	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**78,992,681**	**246,723,168**	**256,147**	**1,647,100**	**69,191,673**	**889,263**	**397,700,032**
Մաշվածություն և արժեզրկումից կորուստներ							
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	(23,852,870)	(135,275,295)	(90,687)	(932,398)	-	(449,493)	(160,600,743)
Տարվա մաշվածություն	(2,361,155)	(16,737,318)	(14,357)	(117,877)	-	(303,294)	(19,534,001)
Օտարումներ/դուրսգրումներ	203,232	629,207	475	2,491	-	-	835,405
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**(26,010,793)**	**(151,383,406)**	**(104,569)**	**(1,047,784)**	**-**	**(752,787)**	**(179,299,339)**
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	(26,010,793)	(151,383,406)	(104,569)	(1,047,784)	-	(752,787)	(179,299,339)
Տարվա մաշվածություն	(2,504,988)	(18,705,085)	-	(116,655)	-	(126,462)	(21,453,190)
Օտարումներ/դուրսգրումներ	415,357	12,831,359	-	87,091	-	-	13,333,807
Տեղափոխումներ	-	(24)	-	24	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**(28,100,424)**	**(157,257,156)**	**(104,569)**	**(1,077,324)**	**-**	**(879,249)**	**(187,418,722)**
Հաշվեկշռային արժեք							
Առ 1 հունվարի 2021թ.	51,521,298	92,880,137	832,917	428,831	70,999,815	438,788	217,101,786
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	52,296,453	91,861,341	5,210,732	523,903	69,070,604	136,476	219,099,509
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**50,892,257**	**89,466,012**	**151,578**	**569,776**	**69,191,673**	**10,014**	**210,281,310**

2022թ. ընթացքում 1,672,357 հազար դրամ (2021թ-ին՝ 1,557,816 հազար դրամ) գումարով փոխառության ծախսումները կապիտալացվել են անավարտ շինարարությանը:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 70,530,890 հազար դրամ (2021թ-ին՝ 63,352,318 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները գրավադրված են բանկերից ստացված՝ գրավով ապահովված վարկերի դիմաց:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված և օգտագործվող հիմնական միջոցների համախառն հաշվեկշռային արժեքը կազմում է 45,413,050 հազար դրամ (2021թ-ին՝ 40,986,404 հազար դրամ):

16. Մակաբացման գործունեության ակտիվ

2014թ-ին Խումբը սկսել է ինտենսիվ մակաբացման գործունեություն Քաջարանի հանքի Ճլորկուտի տեղամասում, որտեղից նախատեսվում է հանքաքարի արդյունահանում առաջիկա տարիներին, և կապիտալացրել է մակաբացման ծախսումները որպես մակաբացման գործունեության ակտիվ՝ 20,219,211 հազար դրամի չափով (2021թ-ին՝ 7,726,290 հազար դրամ): Խմբի ղեկավարությունը որոշել է Ճլորկուտի տեղամասը որպես իր բաց հանքի առանձին բաղադրիչ:

2022թ. ընթացքում տարածքում կատարվել են լրացուցիչ մակաբացման աշխատանքներ և կապիտալացվել են 12,492,921 հազար դրամի չափով ծախսեր (2021թ-ին՝ 1,967,057 հազար դրամ): Տարածքը դեռևս պիտանի չէ արդյունահանման համար:

17. Կանխավճարներ

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով		
Կանխավճարներ հիմնական միջոցների գծով	14,090,707	5,161,696
Այլ կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	499,637	491,975
	14,590,344	**5,653,671**
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով		
Կանխավճարներ պաշարների գծով	4,381,123	2,814,017
Կանխավճարներ ծառայությունների գծով	1,671,595	762,029
Այլ	251,285	81,685
	6,304,003	**3,657,731**
	20,894,347	**9,311,402**

18. Տրամադրված փոխառություններ

				2022թ.		**2021թ.**	
հազ. դրամ	**Արժույթ**	**Անվանակ. տոկոսադր.**	**Մարման տարի**	**Անվանակ. արժեք**	**Հաշվեկշռ. արժեք**	**Անվանակ. արժեք**	**Հաշվեկշռ. արժեք**
Գրավով չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	8.0%	2023	2,229,414	2,229,414	-	-
Գրավով չապահովված փոխառություններ	ԱՄՆ դոլար	7.6%	2023	31,601,938	31,601,938	-	-
				33,831,352	**33,831,352**	-	-

19. Պաշարներ

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Պահեստամասեր	13,753,182	11,854,513
Հումք և սպառողական նյութեր	7,878,881	4,812,559
Մշակման հանձնված մոլիբդենի խտանյութ*	6,566,035	5,961,719
Պատրաստի արտադրանք	1,835,404	2,462,335
Շինանյութ	265,642	242,121
Այլ	1,969,535	2,697,854
	32,268,679	**28,031,101**
Պաշարների արժեքի նվազեցում ընթացիկ տարում	(2,699,949)	(2,718,337)
	29,568,730	**25,312,764**
Ոչ ընթացիկ պաշարներ – հանքաքարի պաշարներ** (ինքնարժեքով)	**28,993,970**	**21,110,939**

* Խումբը ծառայությունների մատուցման պայմանագրեր է ստորագրել կապակցված կողմերի հետ մոլիբդենի խտանյութը ֆերոմոլիբդենի վերամշակելու համար: Վերամշակման ընթացքում Խումբը պահպանում է սեփականության իրավունքը: Ստացված ծառայությունների գծով համապատասխան ծախսերը ներկայացված են Ծանոթագրություն 7-ում:

** Ոչ ընթացիկ պաշարներն իրենցից ներկայացնում են մետաղի ցածր պարունակությամբ հանքաքար, որը հնարավոր չէ տնտեսապես արդյունավետ վերամշակել ներկայիս շուկայական գների պայմաններում, և պահուստավորվել է հետագայում վերամշակման ակնկալիքով:

20. Պետական բյուջեից ստացվելիք ռոյալթի

2022թ. ընթացքում Խումբը կատարել է կանխավճարներ ռոյալթիի գծով 2021թ. ռոյալթիի ծախսի չափով, 2022թ. ռոյալթիի գծով փաստացի ծախսն ավելի ցածր էր: 2022թ. ռոյալթիի հաշվետվությունը հարկային մարմիններին ներկայացնելուց հետո կանխավճարված գումարը հասանելի կլինի օգտագործման համար: Ղեկավարությունը նախատեսում է օգտագործել գումարը մեկ տարվա ընթացքում:

21. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Առևտրական դեբիտորական պարտքեր (պայմանական գնանշման ոչ ենթակա)	5,134,229	7,475,226
Դեբիտորական պարտքեր կապակցված կողմերից*	9,839,250	-
Այլ դեբիտորական պարտքեր	2,090,905	1,076,305
Ամորտիզացված արժեքով չափվող առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	**17,064,384**	**8,551,531**
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	(3,219,681)	(2,643,028)
	13,844,703	**5,908,503**
Առևտրական դեբիտորական պարտքեր (պայմանական գնանշման ենթակա) – իրական արժեքով	23,488,491	13,574,605
Ընդամենը առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	**37,333,194**	**19,483,108**

* 2022թ. ընթացքում Խումբը կապակցված կողմի հետ կնքել է ցեսիայի պայմանագիր՝ 2023թ. հուլիսի 1-ը ժամկետով: Պայմանագրի արդյունքում 5,059,154 հազար դրամ և 4,780,096 հազար դրամ գումարները տեղափոխվել են համապատասխանաբար հիմնական միջոցներից և առևտրական և այլ դեբիտորական պարտքերից: Կապակցված կողմերից ստացվելիք դեբիտորական պարտքերը ժամկետանց չեն և գրավով ապահովված չեն:

Առևտրական դեբիտորական պարտքերը (պայմանական գնանշման ոչ ենթակա) տոկոսակիր չեն և հիմնականում ունեն մինչև 1 տարի ժամկետայնություն:

Առևտրական դեբիտորական պարտքերը (պայմանական գնանշման ենթակա) տոկոսակիր չեն, սակայն, ինչպես նշված է Ծանոթագրություն 30-ում, գնորոշման ժամանակաշրջանում ենթարկվում են ապրանքների ապագա գների փոփոխություններին և, հետևաբար, չեն հանդիսանում «միայն մայր գումարի և և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ» և չափվում են իրական արժեքով մինչև մարման ամսաթիվը:

Այս առևտրական դեբիտորական պարտքերի սկզբնական չափումն իրականացվում են այն գումարի չափով, որը Խումբն ակնկալում է ստանալ, որն իրենից ներկայացնում է գնորոշման ժամանակաշրջանի վերջում ըստ ակնկալիքների ստացվելիք գնի գնահատականը: Նախնական հաշիվների մոտավորապես 90%-ը (հիմք ընդունելով պայմանական գինը (պղնձի համար հաշվարկվում է որպես առաքմանը նախորդող շաբաթվա միջին գինը, իսկ մոլիբդենի համար՝ որպես առաքմանը նախորդող ամսվա միջին գինը)) վճարվում է կանխիկով, երբ ապրանքները բեռնվում են, որը նվազեցնում է ՖՀՄՍ 15-ի համաձայն ճանաչված սկզբնական դեբիտորական պարտքը: Գնորոշման ժամանակաշրջանները կարող են տատանվել առաքումից հետո մեկից երկու ամսվա միջև, իսկ վերջնական վճարումն իրականացվում է գնորոշման ժամանակաշրջանի ավարտից հետո 30-60 օրվա ընթացքում: Իրական արժեքի հետ կապված բացահայտումները ներկայացված են Ծանոթագրություն 30-ում:

Ստորև ներկայացված է տեղեկատվություն Խմբի առևտրական դեբիտորական պարտքերի (պայմանական գնանշման ոչ ենթակա) պարտքային ռիսկին ենթարկվածության վերաբերյալ:

հազ. դրամ	**Մինչև 3 ամիս**	**3-6 ամիս**	**6-9 ամիս**	**9-12 ամիս**	**Ավելի քան 1 տարի**	**Ընդամենը**
31 դեկտեմբերի 2022թ.						
Ակնկալվող պարտքային կորուստների դրույք	0.08%	5.41%	6.58%	1.61%	90.75%	18.87%
Համախառն հաշվեկշռային արժեք	11,988,176	553,964	531,174	534,597	3,456,473	17,064,384
Ակնկալվող պարտքային կորուստներ	(9,370)	(29,958)	(34,945)	(8,627)	(3,136,781)	(3,219,681)
Զուտ հաշվեկշռային արժեք	**11,978,806**	**524,006**	**496,229**	**525,970**	**319,692**	**13,844,703**

հազ. դրամ	**Մինչև 3 ամիս**	**3-6 ամիս**	**6-9 ամիս**	**9-12 ամիս**	**Ավելի քան 1 տարի**	**Ընդամենը**
31 դեկտեմբերի 2021թ.						
Ակնկալվող պարտքային կորուստների դրույք	2.51%	1%	0.11%	0.32%	40.50%	31.00%
Համախառն հաշվեկշռային արժեք	409,658	324,696	1,055,202	273,644	6,488,331	8,551,531
Ակնկալվող պարտքային կորուստներ	(10,304)	(3,251)	(1,095)	(865)	(2,627,513)	(2,643,028)
Զուտ հաշվեկշռային արժեք	**399,354**	**321,445**	**1,054,107**	**272,779**	**3,860,818**	**5,908,503**

Ստորև բերվող աղյուսակը ներկայացնում է Խմբի առևտրական դեբիտորական պարտքերի (պայմանական գնանշման ոչ ենթակա) պարտքային որակը:

հազ. դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեք առ 1 հունվարի 2021թ.	4,277,602	3,750,888	438,403	**8,466,893**
Համախառն հաշվեկշռային արժեք առ 31 դեկտեմբերի 2021թ.	734,354	1,328,846	6,488,331	**8,551,531**
Համախառն հաշվեկշռային արժեք առ 31 դեկտեմբերի 2022թ.	12,542,140	1,065,771	3,456,473	**17,064,384**

Ստորև ներկայացված են առևտրական դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխությունները տարվա ընթացքում:

հազ. դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ առ 1 հունվարի 2021թ.	**52,782**	**211,692**	**229,007**	**493,481**
Ակնկալվող պարտքային կորուստների արժեզրկման դուրսգրում/վերականգնում	(39,227)	(209,732)	2,398,506	2,149,547
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ առ 31 դեկտեմբերի 2021թ. և 1 հունվարի 2022թ.	**13,555**	**1,960**	**2,627,513**	**2,643,028**
Ակնկալվող պարտքային կորուստների արժեզրկման դուրսգրում/վերականգնում	25,773	41,612	509,268	576,653
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ առ 31 դեկտեմբերի 2022թ.	**39,328**	**43,572**	**3,136,781**	**3,219,681**

22. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են տեղական բանկերում պահվող հաշիվների մնացորդները:

23. Ավանդներ բանկերում

2021թ. ընթացքում Խումբը երկու ժամկետային ավանդ է տեղաբաշխել երկու հայկական բանկում՝ 9.5% տարեկան տոկոսադրույքով: Ավանդների մարման ամսաթիվն է 2023թ. ապրիլի 15-ը, տոկոսները վճարվում են ժամկետի վերջում: Հաշվետու ամսաթվից հետո 2023թ. ապրիլին Խումբը ստացել է ավանդադրված միջոցները:

24. Կապիտալ և պահուստներ

(ա) Կանոնադրական կապիտալ և էմիսիոն եկամուտ

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ ժամանակ առ ժամանակ հայտարարվող շահաբաժինները և քվեարկել Խմբի բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

2021թ. ընթացքում Խմբի հետգնված բաճնետոմսերի 60%-ը (1,649,003 հետգնված բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 20 հազար դրամ անվանական արժեքով) վաճառվել է «Պրոմիշլեննայա Կոմպանիա» ԲԸ-ին: Խումբը ստացել է վճարումը 2021թ. չորրորդ եռամսյակում: Հետագայում Պրոմիշլեննայա Կոմպանիա» ԲԸ-ն Խմբի բաժնետոմսերի 15%-ը (412,251 հետգնված բաժնետոմս) նվիրաբերել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

2021թ. նոյեմբերին Խմբի բաժնետոմսերի 15%-ը (412,250 հետգնված բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 20 հազար դրամ անվանական արժեքով) վաճառվել էր «Ուրբանեվենտ պլյուս» ՍՊԸ-ին: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառված բաժնետոմսերի դիմաց ստացվելիք ընդհանուր գումարը կազմում էր 29,485,340 հազար դրամ, որը ներառվել էր այլ ընթացիկ ակտիվների կազմում՝ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Խումբը ստացել է վճարումը հաշվետու ամսաթվից հետո:

Վաճառված հետգնված բաժնետոմսերի հետգնման գնի և տեղաբաշխման գնի տարբերությունը ճանաչվել է որպես էմիսիոն եկամուտ՝ 18,167,106 հազար դրամ ընդհանուր գումարով:

(բ) Շահաբաժիններ

ՀՀ օրենսդրության համաձայն՝ Խմբի բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Խմբի Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված համախմբված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով՝ բացառությամբ չբաշխված շահույթի գծով գործող ստորև ներկայացված սահմանափակումների:

2021թ. մայիսին կայացած Բաժնետերերի ժողովում Խումբը հայտարարել է շահաբաժիններ 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 410,042 հազար դրամ ընդհանուր գումարով սովորական բաժնետոմսերի գծով (597 դրամ մեկ բաժնետոմսի դիմաց):

2022թ-ին շահաբաժիններ հայտարարելու մասին 2021թ. մայիսին կայացված որոշումը չեղարկվել է:

25. Թողարկված պարտատոմսեր

2019թ. ընթացքում Խումբը թողարկել է տոկոսակիր տեղական պարտատոմսեր՝ 2,500,000 հազար դրամ և 50,000 հազար ԱՄՆ դոլար անվանական արժեքով՝ 2022թ-ին մարման ժամկետով: Տարեկան տոկոսադրույքը կազմում է 7.5%-ից 11%: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված պարտատոմսերի մնացորդն ամբողջությամբ մարվել է (2021թ-ին՝ 26,484,802 հազար դրամ):

Պարտատոմսերը թողարկվել են Խմբի կողմից պարտավորությունները, կապիտալ ներդրումների նախագծերը ֆինանսավորելու և կապիտալի ֆինանսավորման ներկայիս կառուցվածքը բարելավելու համար: Գործիքները ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

26. Պահուստներ

հազ. դրամ	**Տեղանքի վերականգնման գծով պահուստ**	**Արձակուրդի պահուստ**	**Ընդամենը**
Ոչ ընթացիկ	3,988,393	-	3,988,393
Ընթացիկ	42,299	301,949	344,248
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	**4,030,692**	**301,949**	**4,332,641**
Տարվա ընթացքում օգտագործված պահուստ	(466,484)	-	(466,484)
Գնահատումների փոփոխություններ	84,721	(301,949)	(217,228)
Ձեղչի ծախսագրում	338,014	-	338,014
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**3,986,943**	**-**	**3,986,943**
Ոչ ընթացիկ	3,966,398	-	3,966,398
Ընթացիկ	20,545	-	20,545
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**3,986,943**	**-**	**3,986,943**
Տարվա ընթացքում օգտագործված պահուստ	(40,366)	-	(40,366)
Գնահատումների փոփոխություններ	(701,988)	2,802,073	2,100,085
Ձեղչի ծախսագրում	396,874	-	396,874
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**3,641,463**	**2,802,073**	**6,443,536**
Ոչ ընթացիկ	3,621,700	-	3,621,700
Ընթացիկ	19,763	2,802,073	2,821,836

(ա) Տեղանքի վերականգնում

Արծվանիկի պոչամբար

Խումբն ունի հանքի շահագործման և խտանյութի արտադրության նպատակով օգտագործված պոչամբարի (Արծվանիկի պոչամբար) օգտագործման ընթացքում աղտոտված հողատարածքը վերականգնելու կառուցողական պարտականություն: Արծվանիկի պոչամբարի վերականգնման գծով պահուստը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 2,875,908 հազար դրամ (2021թ-ին՝ 3,149,539 հազար դրամ):

Պարտականությունը կատարելու համար պահանջվող գնահատված չզեղչված դրամական հոսքերի ընդհանուր գումարը կազմում է 7,810,515 հազար դրամ (2021թ-ին՝ 7,616,789 հազար դրամ)՝ հաշվի առնելով Հայաստանի համար կանխատեսվող սղաճի միջին դրույքը՝ 5.82% (2021թ-ին՝ 4.99%): Տասներկու տարի ժամկետում կատարվելիք վերականգնման ծախսերի նկատմամբ կիրառվել է տարեկան զեղչման դրույք՝ 12%-ի չափով (2021թ-ին՝ 10.05%): Պահուստի ժամկետները որոշվել են հիմք ընդունելով 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող պոչամբարի հետ կապված վերականգնման պարտականության կատարման ժամկետների ղեկավարության գնահատականը: Զեղչման դրույքն իրենից ներկայացնում է ՀՀ պետական երկարաժամկետ պարտատոմսերի համար կիրառվող դրույքը:

Պահուստի գումարն աճել է նախորդ տարվա համար ճանաչված գումարի համեմատ՝ պայմանավորվածէ վերականգնման աշխատանքների գնահատված ծավալի, գնահատված տարեկան զեղչման դրույքի և սղաճի դրույքի փոփոխություններով: Գնահատված ապագա ծախսերի փոփոխությունները հաշվառվել են առջընթաց՝ ճանաչելով ճշգրտում տեղանքի վերականգնման պարտավորության գծով և համապատասխան ճշգրտում այն ակտիվի գծով, որին այն վերաբերում է:

Հանքասարի պոչամբար

Խումբն ունի հանքի շահագործման և խտանյութի արտադրության նպատակով օգտագործված պոչամբարի (Հանքասարի պոչամբար) օգտագործման ընթացքում աղտոտված հողատարածքը վերականգնելու կառուցողական պարտականություն: Հանքասարի պոչամբարի վերականգնման գծով պահուստը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 306,214 հազար դրամ (2021թ-ին՝ 281,021 հազար դրամ):

Պարտականությունը կատարելու համար պահանջվող գնահատված չզեղչված դրամական հոսքերի ընդհանուր գումարը կազմում է 275,529 հազար դրամ՝ հաշվի առնելով Հայաստանի համար կանխատեսվող սղաճի միջին դրույքը՝ 5.82% (2021թ-ին՝ 4.99%): 2023թ-ից 2025թ. ընկած երեք տարում կատարվելիք վերականգնման ծախսերի նկատմամբ կիրառվել է տարեկան զեղչման դրույք՝ 12%-ի չափով (2021թ-ին՝ 10.05%): Պահուստի ժամկետները որոշվել են հիմք ընդունելով գործող պոչամբարի հետ կապված վերականգնման պարտականության կատարման ժամկետների ղեկավարության գնահատականը: Զեղչման դրույքն իրենից ներկայացնում է ՀՀ պետական երկարաժամկետ պարտատոմսերի համար կիրառվող դրույքը:

Հանքի փակում և թափոնների լցակույտեր

2013թ. ընթացքում Ընդերքի մասին վերանայված օրենսգրքի համաձայն պարզաբանվել և իրավաբանորեն կատարման ենթակա են դարձել հայկական հանքարդյունաբերական ընկերությունների տեղանքի վերականգնման պարտականությունները: Վերանայված օրենսգիրքը սահմանում է համակարգ, որի շրջանակում Խումբը պետք է վճարումներ կատարի համապատասխան պետական հիմնադրամին: Պահանջվող վճարումների հաշվարկն իրականացվում է կառավարության կողմից առանձին իրավական ակտով սահմանված բանաձևի համաձայն: 2013թ. փետրվարի 11-ին կառավարությունը հրապարակեց տեղանքի վերականգնման պարտականության գծով վճարումների հաշվարկի մեթոդին վերաբերող իրավական ակտ, որը պետք է պատրաստվի ղեկավարության կողմից և հաստատվի պետական մարմինների կողմից:

Վերականգնման աշխատանքների ծավալը, ժամկետները և ծախսերը սահմանված են Խմբի Հանքի փակման ծրագրով: Վերականգնման աշխատանքները ներառում են՝ թափոնների լցակույտերի մակերևույթի և լանջերի ռեկուլտիվացիա, բաց հանքի պատերի ամրացում և ռեկուլտիվացիա, լցակույտերի տարածքում ջրահեռացման համակարգի վերականգնում, բաց հանքը, լցակույտերը և գործարանը միացնող ճանապարհների քանդում և հողի ու բուսականության շերտով ծածկում, բոլոր վնասված հողատարածքների վերականգնում, փոսերի լցնում:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հանքի փակման և թափոնների լցակույտերի վերացման հետ կապված վերականգնման աշխատանքների գծով պահուստը կազմել է 459,341 հազար դրամ (2021թ-ին՝ 556,383 հազար դրամ):

Պարտականությունը կատարելու համար պահանջվող գնահատված չզեղչված դրամական հոսքերի ընդհանուր գումարը կազմում է 2,819,630 հազար դրամ: Քսան տարի ժամկետում կատարվելիք վերականգնման ծախսերի նկատմամբ կիրառվել է տարեկան զեղչման դրույք՝ 12%-ի չափով (2021թ-ին՝ 10.1%):

Պահուստի ժամկետները որոշվել են հիմք ընդունելով Խմբի գործող Լիցենզիայի պայմանագրի ժամկետը: Զեղչման դրույքն իրենից ներկայացնում է ՀՀ պետական երկարաժամկետ պարտատոմսերի համար կիրառվող դրույքը:

27. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն Խմբի տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների վերաբերյալ: Տոկոսադրույքային, արժութային և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 30-ում:

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկեր և վարկային գծեր/օվերդրաֆտներ	8,016,060	21,515,320
Գրավով չապահովված բանկային վարկեր և վարկային գծեր/օվերդրաֆտներ	-	3,596,404
Գրավով ապահովված վարկեր այլ կազմակերպություններից	20,859,873	7,912,240
	28,875,933	**33,023,964**
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկեր և վարկային գծեր/օվերդրաֆտներ	15,627,368	15,741,639
Գրավով չապահովված բանկային վարկեր և վարկային գծեր/օվերդրաֆտներ	-	1,441,900
Գրավով ապահովված վարկեր այլ կազմակերպություններից	17,829,901	15,862,326
Գրավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	-	10,643,094
	33,457,269	**43,688,959**
	62,333,202	**76,712,923**

Գրավով ապահովված բանկային վարկերը և օվերդրաֆտները ստացվել են հայկական բանկերից են և ապահովված են հիմնական միջոցներով (Ծանոթագրություն 15):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 46,400 հազար ԱՄՆ դոլարի չափով (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 26,400 հազար ԱՄՆ դոլար) չօգտագործված վարկային գծեր:

(ա) Պայմանները և մարման ժամանակացույցը

Ստորև ներկայացված են վարկերի և փոխառությունների պայմանները:

				2022թ.		**2021թ.**	
հազ. դրամ	**Արժույթ**	**Անվանակ. տոկոսադր.**	**Մարման տարի**	**Անվանակ. արժեք**	**Հաշվեկշռ. արժեք**	**Անվանակ. արժեք**	**Հաշվեկշռ. արժեք**
Գրավով ապահովված բանկային վարկեր և վարկային գծեր/օվերդրաֆտներ	ԱՄՆ դոլար	7.95%-9%	2025	23,793,721	23,643,428	37,106,666	37,256,959
Գրավով չապահովված բանկային վարկեր և վարկային գծեր/օվերդրաֆտներ	ԱՄՆ դոլար	7.5%	2022-2025	-	-	24,060,920	23,774,566
Գրավով ապահովված վարկեր այլ կազմակերպություններից	ԱՄՆ դոլար	(4.5% + CRR), (LIBOR+ 5.5%/7%)	2022-2023	38,919,887	38,689,774	10,643,094	10,643,094
Գրավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	ԱՄՆ դոլար	8.5%-9.15%	2022-2025	-	-	5,038,304	5,038,304
Ընդամենը վարկեր և փոխառություններ				**62,713,608**	**62,333,202**	**76,848,984**	**76,712,923**

(բ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	Պարտավորություններ		2022թ.	Պարտավորություններ			2021թ.
հազ. դրամ	**Վարկեր և փոխառություններ**	**Թողակված պարտատոմսեր**	**Ընդամենը**	**Վարկեր և փոխառություններ**	**Թողակված պարտատոմսեր**	**Պարտավորություններ հետգնված բաժնետոմսերի գծով**	**Ընդամենը**
Մնացորդը առ 1 հունվարի	**76,712,923**	**26,484,802**	**103,197,725**	**134,329,697**	**28,550,985**	**39,084,742**	**201,965,424**
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված							
Մուտքեր թողարկումից	77,451,497	-	77,451,497	5,410,071	-	-	5,410,071
Մարում	(66,597,958)	(24,000,097)	(90,598,055)	(46,634,671)	-	(14,108,479)	(60,743,150)
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	**10,853,539**	**(24,000,097)**	**(13,146,558)**	**(41,224,600)**	**-**	**(14,108,479)**	**(55,333,079)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ	(11,573,911)	(2,525,381)	(14,099,292)	(3,561,037)	(1,641,690)	(1,449,286)	(6,652,013)
Անկանխիկ գործառնություններ	(13,888,388)	1,533,273	(12,355,115)	(14,187,574)	-	(25,447,875)	(39,635,449)
Այլ	229,039	(1,492,597)	(1,263,558)	1,356,437	(424,493)	1,920,898	2,852,842
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**62,333,202**	**-**	**62,333,202**	**76,712,923**	**26,484,802**	**-**	**103,197,725**

«Այլ» տողը ներառում է հետգնված բաժնետոմսերի, վարձակալության գծով պարտավորությունների, թողարկված պարտատոմսերի և վարկերի և փոխառությունների գծով պարտավորությունների գծով հաշվեգրված, սակայն դեռ չվճարված տոկոսների ազդեցությունը: Խումբը վճարված տոկոսները դասակարգում է որպես ֆինանսավորման գործունեությունից ստացվող դրամական հոսքեր:

28. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Պաշարների և հիմնական միջոցների ձեռքբերման համար վճարվելիք գումարներ	8,521,279	11,506,299
Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների գծով	7,419,242	5,478,350
Հայտարարված շահաբաժիններ	-	410,042
Այլ կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված ծախսեր	3,762,845	417,805
	19,703,366	**17,712,496**

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արժութային և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 30-ում:

29. Պայմանագրի գծով պարտավորություններ

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված ընթացիկ կանխավճարներ	10,105,868	16,035,212
Պայմանագրի գծով պարտավորություններ բեռնափոխադրման/ առաքման ծառայություններից ստացված հասույթի գծով	878,635	980,547
	10,984,503	**17,015,759**

Ժամանակ առ ժամանակ Խումբը ճանաչում է պայմանագրի գծով պարտավորություններ մետաղի խտանյութի վաճառքի գծով, որը վաճառվում է Ինկոտերմսի FCA (մինչև բեռնափոխադրողի մոտ) և CIP (փոխադրումը և ապահովագրումը վճարած է մինչև) պայմաններով, որի դեպքում դրամական միջոցների մի մասը կարող է ստացվել գնորդից մինչև բեռնափոխադրման/առաքման ծառայությունների մատուցումը: Հաշվետու ժամանակաշրջանում ճանաչված հասույթը, որը ներառված էր պայմանագրի գծով պարտավորությունների տարեսկզբի մնացորդում, կազմում էր 980,547 հազար դրամ (2021թ-ին՝ 744,045 հազար ՀՀ դրամ):

Գործարքի գինը, որը բաշխված է մնացած կատարման պարտականություններին (չկատարված կամ մասամբ չկատարված), 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում էր 878,635 հազար դրամ (2021թ-ին՝ 980,547 հազար դրամ): Մյուս բոլոր կատարման պարտականությունների ճանաչումն ակնկալվում մեկ տարվա ընթացքում:

2022թ. հունվարի 1-ի դրությամբ պայմանագրի գծով պարտավորությունների սկզբնական մնացորդը կազում էր 980,547 հազար դրամ: Պայմանագրի գծով պարտավորությունների շարժը մեկ ժամանակաշրջանից մյուսը կախված է բեռնափոխադրման/առաքման ծառայությունների հետ կապված հետաձգված հասույթի արժեքից, որոնք ժամանակաշրջանի վերջում դեռևս գտնվում են մատուցման փուլում, այսինքն՝ պղնձի խտանյութի առաքումը Ինկոտերմսի CIP պայմանով դեռևս ընթացքի մեջ է գտնվում ժամանակաշրջանի վերջում:

Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված ընթացիկ կանխավճարներում ներառված են 10,105,868 հազար դրամ գումարով կանխավճարները (2021թ-ին՝ ՝ 16,035,212 հազար դրամ), որոնք ենթակա են հաշվանցման պղնձի և մոլիբդենի խտանյութի վաճառքի դիմաց 2022 թ. ընթացքում: Այս մնացորդների գծով կիրառվում է հետևյալ տոկոսադրույքը՝ 1 ամսվա ԱՄՆ դոլարի Libor գումարած 4.5-4.95%:

հազ. դրամ	Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված ընթացիկ կանխավճարներ	Պայմանագրի գծով պարտավորություններ առաքման ծառայությունների գծով	Ընդամենը
Ընթացիկ	16,035,212	980,547	17,015,759
Մնացորդը առ 1 հուվարի 2022թ.	16,035,212	980,547	17,015,759
Ստացված կանխավճարներ	317,704,769	6,841,708	324,546,477
Կանխավճարների մարում	(323,669,963)	(6,943,620)	(330,613,583)
Կանխավճարների գծով հաշվեգրված տոկոսներ	588,018	-	588,018
Տոկոսների մարում	(552,168)	-	(552,168)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**10,105,868**	**878,635**	**10,984,503**
Ընթացիկ	10,105,868	878,635	10,984,503
Ընթացիկ	16,159,864	744,045	16,903,909
Մնացորդը առ 1 հուվարի 2021թ.	16,159,864	744,045	16,903,909
Ստացված կանխավճարներ	305,675,495	6,611,401	312,286,896
Կանխավճարների մարում	(305,160,371)	(6,374,899)	(311,535,270)
Կանխավճարների գծով հաշվեգրված տոկոսներ	1,697,960	-	1,697,960
Տոկոսների մարում	(2,337,736)	-	(2,337,736)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**16,035,212**	**980,547**	**17,015,759**
Ընթացիկ	16,035,212	980,547	17,015,759

30. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Հաշվապահական հաշվառման դասակարգումներ և իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

(բ) Իրական արժեքի չափում

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Տեսակը	Գնահատման մեթոդ	Նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	Ձեղչված դրամական հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն
Այլ ֆինանսական պարտավորություններ*	Ձեղչված դրամական հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն

* Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրական կրեդիտորական պարտքերը:

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
31 դեկտեմբերի 2022թ.				
Պղնձի վաճառքի պայմանագրերում ներկառուցված ածանցյալ գործիքներ	-	9,959,953	-	**9,959,953**
Մոլիբդենի վաճառքի պայմանագրերում ներկառուցված ածանցյալ գործիքներ	-	-	10,194,693	**10,194,693**
Ֆերոմոլիբդենի վաճառքի պայմանագրերում ներկառուցված ածանցյալ գործիքներ	-	-	3,333,845	**3,333,845**
31 դեկտեմբերի 2021թ.				
Պղնձի վաճառքի պայմանագրերում ներկառուցված ածանցյալ գործիքներ	-	13,555,595	-	**13,555,595**
Մոլիբդենի վաճառքի պայմանագրերում ներկառուցված ածանցյալ գործիքներ	-	-	19,010	**19,010**

Ներկառուցված ածանցյալ գործիքների իրական արժեքը հաշվարկվել է օգտագործելով մետաղների շուկաների հաշվետու ամսաթվի դրությամբ ֆորվարդային գները:

Զգայնության վերլուծություն

Պղնձի և մոլիբդենի ֆորվարդային գների 5% աճը հաշվետու ամսաթվի դրությամբ կավելացներ շահույթը կամ վնասը մինչև հարկումը 3,223,003 հազար դրամով 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 687,625 հազար դրամով): Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես արտարժույթի փոխարժեքները, կմնան անփոփոխ:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պղնձի և մոլիբդենի ֆորվարդային գների 5% նվազումը կունենար նույն չափով, բայց հակառակ ազդեցությունը վերը նշված գումարների վրա, պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ (տես Ծանոթագրություն 30 (գ) (ii)),
- իրացվելիության ռիսկ (տես Ծանոթագրություն 30 (գ) (iii)),
- շուկայական ռիսկ (տես Ծանոթագրություն 30 (գ) (iv)):

(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատու է Խմբի ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման և հսկողության համար: Ղեկավարությունը կանոնավոր հիմունքով հաշվետվություններ է ներկայացնում Տնօրենների խորհրդին իր գործունեության վերաբերյալ:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների և կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Խումբը նպատակ ունի ստեղծել հսկողության կանոնակարգված և գործող համակարգ, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում ունեն իրենց դերերի և պարտականությունների մասին:

(ii) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում առևտրական և այլ դեբիտորական պարտքերի, դրամական միջոցների և դրանց համարժեքների, բանկային ավանդների և տրամադրված փոխառությունների հետ կապված:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքն արտացոլում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին: Ստորև ներկայացված է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

հազ. դրամ	**Ծնթգ.**	**Հաշվեկշռային արժեք**	
		2022թ.	**2021թ.**
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	21	37,333,194	19,483,108
Տրամադրված փոխառություններ	18	33,831,352	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ	22	21,548,194	35,720,938
Ավանդներ բանկերում	23	7,866,619	18,484,982
		100,579,359	**73,689,028**

Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր գնորդի բնութագրերից: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի ինը գնորդ (2021թ-ին՝ երկու), որոնցից յուրաքանչյուրը Խմբին պարտք է ավելի քան 1,000,000 հազար դրամ և որոնց բաժին է ընկնում ընդհանուր դեբիտորական պարտքերի մոտավորապես 91.2%-ը (2021թ-ին՝ 78%):

Խումբը ձևավորում է արժեզրկման գծով պահուստ, որն իրենից ներկայացնում է առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով կրած վնասների գնահատականը: Այդ պահուստը վերաբերում է առանձին հիմունքով նշանակալի առևտրական դեբիտորական պարտքերին, որոնք արժեզրկված են:

Խումբը չի պահանջում գրավ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի համար:

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածությունն առևտրական դեբիտորական պարտքերի հետ կապված՝ ըստ աշխարհագրական տարածքների:

հազ. դրամ	**Հաշվեկշռային արժեք**	
	2022թ.	**2021թ.**
Արտերկիր	35,480,427	17,044,722
Հայաստան	1,852,767	2,438,386
	37,333,194	**19,483,108**

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածությունն առևտրական դեբիտորական պարտքերի հետ կապված՝ ըստ գնորդների տեսակների:

հազ. դրամ	**Հաշվեկշռային արժեք**	
	2022թ.	**2021թ.**
Պղնձի և մոլիբդենի գնորդներ	23,488,491	13,574,605
Այլ արտադրանք – այլ գնորդներ	13,844,703	5,908,503
	37,333,194	**19,483,108**

Խմբի գնորդներից ոչ մեկը չունի արտաքին վարկանիշ: Գնորդների մեծ մասը Խմբի հետ համագործակցում է ավելի քան 3 տարի:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում գնորդների համար

Խումբը պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքին տալիս է պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ այն տվյալների հիման վրա, որոնք օգտագործվում են կորստի ռիսկը կանխատեսելու համար (որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ արտաքին վարկանիշեր, աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններ, կառավարչական հաշվետվություններ, դրամական հոսքերի կանխատեսումներ և հաճախորդների մասին մամուլում հրապարակված տեղեկատվություն), և կիրառելով պարտքային որակի վերաբերյալ փորձագետների դատողությունները: Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակները սահմանվում են որակական և քանակական գործոնների հիման վրա, որոնք վկայում են պարտազանցման ռիսկի մասին և համընկնում են այնպիսի գործակալությունների արտաքին վարկանշավորման սահմանումներին ինչպիսին «Moody's Investor Services»-ն է: Ղեկավարությունը դիտարկում է Խմբի գնորդների բազայի ժողովրդագրությունը, ներառյալ այն երկրի պարտազանցման ռիսկը, որտեղ իր գործունեությունն է իրականացնում գնորդը, քանի որ այդ գործոնները կարող են ազդեցություն ունենալ պարտքային ռիսկի վրա, հատկապես ներկայիս տնտեսական պայմաններում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և բանկային ավանդներ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի 21,548,194 հազար դրամ (2021թ-ին՝ 35,720,938 հազար դրամ) գումարով դրամական միջոցներ և դրանց համարժեքներ բանկերում և 7,866,619 հազար դրամ (2021թ-ին՝ 18,484,982 հազար դրամ) բանկային ավանդներ, որոնք իրենցից ներկայացնում են առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների հետ կապված: Դրամական միջոցները և դրանց համարժեքները և բանկային ավանդները պահվում են «Moody's Investor Services» վարկանիշային գործակալության Ba3 վարկանիշով Հայաստանի խոշոր բանկերում, և Խումբը չի ակնկալում, որ բանկերը չեն կատարի իրենց պարտականությունները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների և բանկային ավանդների գծով արժեզրկումը չափվել է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա և արտացոլում են դրանց կարճաժամկետայնությունը: Խումբը գտնում է, որ իր դրամական միջոցները և դրանց համարժեքները ցածր պարտքային ռիսկ ունեն՝ հիմք ընդունելով պայմանագրային կողմերի արտաքին վարկանիշները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատելու համար Խումբը կիրառում է առևտրական դեբիտորական պարտքերի համար օգտագործվող մոտեցմանը նմանատիպ մոտեցում:

Տրամադրված փոխառություններ

Խումբը տրամադրել է փոխառություններ կապակցված կողմերին: Մնացորդների մարման ժամկետը մեկ տարուց պակաս է: Տրամադրված փոխառությունները գրավով ապահովված չեն, ժամկետանց չեն և արժեզրկված չեն:

Տրամադրված փոխառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատելու համար Խումբը կիրառում է առևտրական դեբիտորական պարտքերի համար օգտագործվող մոտեցմանը նմանատիպ մոտեցում:

(iii) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Խմբի մոտեցումն է ապահովել, որքանով հնարավոր է, բավարար իրացվելիություն սովորական և արտասովոր պայմաններում պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի համբավը վտանգելու:

Խումբն ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը, այդ թվում՝ ֆինանսական պարտականությունները կատարելու համար: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների, օրինակ՝ բնական աղետների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ ողջամտորեն կանխատեսել:

Ենթարկվածությունն իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված են ֆինանսական պարտավորությունների պայմանագրային մարման ժամկետները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված են համախառն և չզեղչված գումարները, որոնք ներառում են գնահատված տոկոսային վճարումները:

2022թ.

հազ. դրամ	Հաշվեկշռ. արժեք	Ընդամենը պայմանագր. դրամական հոսքեր	Ցպահանջ	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-5 տարի	2-5 տարի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Տոկոսակիր վարկեր և փոխառություններ	62,333,202	65,723,452	-	5,759,894	28,399,246	14,388,851	17,175,461
Առևտրական կրեդիտորական պարտքեր	19,703,366	19,703,366	-	-	19,703,366	-	-
Այլ ֆինանսական պարտավորություններ	2,351,219	2,351,219	-	-	2,351,219	-	-
	84,387,787	**87,778,037**	**-**	**5,759,894**	**50,453,831**	**14,388,851**	**17,175,461**

2021թ.

հազ. դրամ	Հաշվեկշռ. արժեք	Ընդամենը պայմանագր. դրամական հոսքեր	Ցպահանջ	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-5 տարի	2-5 տարի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Տոկոսակիր վարկեր և փոխառություններ	76,712,923	79,302,842	-	19,090,665	27,639,380	20,772,665	11,800,132
Առևտրական կրեդիտորական պարտքեր	17,712,496	17,712,496	-	-	17,497,442	215,054	-
Թողարկված պարտատոմսեր	26,484,802	26,484,802	-	-	26,484,802	-	-
Վարձակալության գծով պարտավորություններ	222,289	222,289	-	-	222,289	-	-
Այլ ֆինանսական պարտավորություններ	3,553,034	3,553,036	-	-	3,553,036	-	-
	124,685,544	**127,275,465**	**-**	**19,090,665**	**75,396,949**	**20,987,719**	**11,800,132**

Չի ակնկալվում, որ մարման ժամկետների վերլուծությունում ներառված դրամական հոսքերը կարող են առաջանալ նշվածից նշանակալիորեն ավելի վաղ կամ նշվածներից նշանակալիորեն տարբեր գումարներով:

Խմբին հասանելի են ֆինանսավորման տարբեր աղբյուրներ, և 12 ամսվա ընթացքում մարվման ժամկետով պարտքը կարող է երկարաձգվել ռակա վարկատուների միջոցով: Սովորաբար Խումբն ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի 60 օրվա ընթացքում ակնկալվող գործառնական ծախսերը, այդ թվում՝ ֆինանսական պարտականությունները կատարելու համար:

(iv) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է շուկայական գների, օրինակ՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Խումբը չի կիրառում հեջավորման գործիքներ ապրանքային շուկաների գների կտրուկ աճի ժամանակ:

Արժութային ռիսկ

Արժութային ռիսկին Խմբի ենթարկվածությունը կապված է Խմբի ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված վաճառքների, գնումների և փոխառությունների հետ: Այս գործարքներն հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Որպես կանոն, փոխառություններն արտահայտվում են այն արժույթով, որը համապատասխանում է Խմբի գործառնություններից առաջացող դրամական միջոցներին՝ հիմնականում ԱՄՆ դոլարին: Փոխառությունների գծով տոկոսներն արտահայտված են փոխառության արժույթով: Այսպիսով, առաջանում է տնտեսական հեջավորում՝ առանց ածանցյալ պայմանագրեր կնքելու անհրաժեշտության:

Արտարժույթով արտահայտված այլ դրամային ակտիվների և պարտավորությունների համար Խմբի քաղաքականությունը պահանջում է ապահովել զուտ ենթարկվածության ընդունելի մակարդակ՝ գնելով կամ վաճառելով արտարժույթը սփոթ դրույքներով՝ անհրաժեշտության դեպքում կարճաժամկետ անհավասարակշռությունը վերացնելու համար:

Ենթարկվածություն արժութային ռիսկին

Ստորև ներկայացված է Խմբի ենթարկվածությունն արժութային ռիսկին:

հազ. դրամ	**ԱՄՆ դոլարով արտահայտված 2022թ.**	**Եվրոյով արտահայտված 2022թ.**	**Ռուբլով արտահայտված 2022թ.**	**Այլ 2022թ.**
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	35,886,072	-	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13,353,384	-	1,139,496	-
Վարկեր և փոխառություններ	(28,501,850)	-	-	-
Տրամադրված փոխառություններ	(31,601,938)	-	-	-
Առևտրական կրեդիտորական պարտքեր	(2,039,204)	(218,976)	(1,148,825)	(4,468)
Զուտ ենթարկվածություն	**(12,903,536)**	**(218,976)**	**(9,329)**	**(4,468)**

հազ. դրամ	**ԱՄՆ դոլարով արտահայտված 2021թ.**	**Եվրոյով արտահայտված 2021թ.**	**Ռուբլով արտահայտված 2021թ.**	**Այլ 2021թ.**
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	17,705,356	585,012	45,501	267
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35,072,458	35,629	5,639	-
Վարկեր և փոխառություններ	(76,712,923)	-	-	-
Առևտրական կրեդիտորական պարտքեր	(2,568,504)	(193,410)	(26,094)	(13,969)
Զուտ ենթարկվածություն	**(26,503,613)**	**427,231**	**25,046**	**(13,702)**

Տարվա ընթացքում կիրառվել արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

ՀՀ դրամով	**Միջին փոխարժեք**		**Ստոր փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ**	
	2022թ.	**2021թ.**	**2022թ.**	**2021թ.**
1 ԱՄՆ դոլար	434.86	503.2	393.57	480.14
1 եվրո	459.48	595.18	420.06	542.61
1 ռուբլի	6.48	6.83	5.59	6.42

Զգայնության վերլուծություն

Ստորև ներկայացված դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր աճը (նվազումը) ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և առանց հարկերի շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնվում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

հազ. դրամ	**Աճ**	**Նվազում**
	Շահույթ կամ (վնաս)	**Շահույթ կամ (վնաս)**
31 դեկտեմբերի 2022թ.		
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ	1,294,820	(1,290,354)
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն եվրոյի նկատմամբ	21,898	(21,898)
31 դեկտեմբերի 2021թ.		
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ	2,650,361	(2,650,361)
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն եվրոյի նկատմամբ	42,723	(42,723)

Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (հաստատուն տոկոսադրույքով պարտք) կամ ապագա դրամական հոսքերը (փոփոխուն տոկոսադրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում հաստատուն կամ փոփոխուն տոկոսադրույքների նկատմամբ Խմբի ենթարկվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա որոշելու համար, թե որ տոկոսադրույքը՝ հաստատունը թե փոփոխունը, ավելի բարենպաստ կլինի Խմբի համար մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում:

Ենթարկվածությունը տոկոսադրույքային ռիսկին

Հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի տոկոսակիր ֆինանսական գործիքների տոկոսադրույքների կառուցվածքը հետևյալն էր.

հազ. դրամ	**Հաշվեկշռային արժեք**	
	2022թ.	**2021թ.**
Հաստատուն տոկոսադրույքով գործիքներ		
Ֆինանսական ակտիվներ	33,831,352	-
Ֆինանսական պարտավորություններ	(62,333,202)	(76,712,923)
	(28,501,850)	**(76,712,923)**

Հաստատուն տոկոսադրույքով ֆինանսական պարտավորությունները ներառում են բանկային ավանդները և կապակցված կողմերից ստացված փոխառությունները:

Իրական արժեքի զգայնության վերլուծություն հաստատուն տոկոսադրույքով գործիքների համար

Խումբը չի հաշվառում հաստատուն տոկոսադրույքով ֆինանսական գործիքները որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունն ազդեցություն չէր ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

(դ) Կապիտալի կառավարում

Խումբը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Խմբի գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու համար: Դա իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Խմբի հասույթի և շահույթի շարունակական հսկողության և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի միջոցով: Ձեռնարկելով այս քայլերն Խումբը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

Ստորև ներկայացված է Խմբի զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Ընդամենը պարտավորություններ	122,949,352	188,800,590
Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները	(21,548,194)	(35,720,938)
Զուտ պարտքը	**101,401,158**	**153,079,650**
Ընդամենը սեփական կապիտալ	**301,380,659**	**204,625,726**
Պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը առ 31-ը դեկտեմբերի	**0.34**	**0.75**

31. Կապիտալ հանձնառություններ

Խումբը մի քանի պայմանագրեր է կնքել սարքավորումների, պահեստամասերի և ծառայությունների ձեռքբերման համար: Այս պայմանագրերի հետ կապված հանձնառությունները 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 11,672,033 հազար դրամ (2021թ-ին՝ 12,706,321 հազար դրամ):

32. Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Խումբն ամբողջությամբ չի ապահովագրել իր հիմնական միջոցները և սարքավորումները, այն ապահովագրված չէ նաև գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Խումբը չունի համապատասխան ապահովագրական ծածկույթ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է նշանակալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Ղեկավարությունը գտնում է, որ Խումբը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում կամ այլ հայցերում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության արդյունքների կամ ֆինանսական վիճակի վրա:

(գ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է տրանսֆերային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2020թ. և հաջորդ տարիներ համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոնները համանման են ՏՀԶԿ-ի ուղեցույցներին, սակայն որոշակի հանգամանքներում առկա է անորոշություն հարկային օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները պարտադրում են հարկ վճարողներին պատրաստել տրանսֆերային գնագոյացման փաստաթղթեր վերահսկվող գործարքների համար, սահմանում են լրացուցիչ հարկերի և տոկոսների հաշվեգրման հիմքեր և մեխանիզմներ, եթե վերահսկվող գործարքների գները տարբերվում են շուկայական գներից:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են ստորև ներկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը գերազանցում է 200 միլիոն դրամը հարկային տարում.

- միջպետական գործարքներ կապակցված կողմերի միջև,
- միջպետական գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ՝ անկախ վերջիններիս կապակցված կողմ լինելու հանգամանքից,
- կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող որոշ գործարքներ, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն տրանսֆերային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել տրանսֆերային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունն այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Վերը նշված հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել զարգացած երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

(դ) Շրջակա միջավայրի պահպանության

Խմբի գործունեությունը կարգավորվում է բազմաթիվ պետական օրենքներով և կանոնակարգերով, որոնք կառավարում են օդը և ջուրը աղտոտող նյութերի արտանետումները, վնասակար նյութերի ու թափոնների և այլ թունավոր նյութերի արտադրությունը, գործածումը, պահպանումը և արտանետումը: Ղեկավարությունը գտնում է, որ Խմբի գործունեությունը համապատասխանում է շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող կառավարության պահանջներին, այդ իսկ պատճառով, պահուստ չի ձևավորել շրջակա միջավայրի պահպանության գծով հնարավոր պարտավորությունների համար, քանի որ ղեկավարությունը հավանական չի համարում նման պարտավորությունների առաջացումը մոտ ապագայում: Այնուամենայնիվ, բնապահպանության հարցերը կարգավորող օրենսդրությունը զարգացման փուլում է Հայաստանի Հանրապետությունում, և օրենսդրության ու վերջինիս մեկնաբանությունների փոփոխությունները կարող են առաջացնել էական պարտավորություններ ապագայում:

33. Գործառնական ռիսկեր

(ա) Հանքեր

Հանքերն ըստ իրենց էության ենթարկվում են բազմաթիվ գործառնական ռիսկերի և գործոնների ազդեցության, որոնք, որպես կանոն, գտնվում են Խմբի հսկողության սահմաններից դուրս և կարող են ազդեցություն ունենալ Խմբի գործունեության, գործառնական արդյունքների և դրամական հոսքերի վրա: Այս գործառնական ռիսկերը և գործոնները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով. (i) գրունտի և ջրի անկանխատեսելի վիճակ և ջրօգտագործման իրավունքների հետ կապված անբարենպաստ պահանջներ, (ii) երկրաբանական խնդիրներ, ներառյալ երկրաշարժերը և այլ բնական աղետները, (iii) մետալուրգիական և մշակման հետ կապված այլ խնդիրներ, (iv) արտասովոր եղանակային կամ գործառնական պայմաններ և այլ ֆորս-մաժորային իրադարձություններ, (v) հանքաքարի ակնկալվողից ցածր որակ կամ արտահանման ծավալ, (vi) վթարներ, (vii) կառավարությունից անհրաժեշտ թույլտվությունների ոչ ժամանակին տրամադրում կամ ընդհանրապես չտրամադրում, (viii) դատական վարույթների արդյունքները, ներառյալ ընդունված որոշումների բողոքարկումը, (ix) հետախուզման և մշակման աշխատանքների հետ կապված անորոշություններ, (x) փոխադրման ուշացումներ, (xi) աշխատանքային վիճաբանություններ, (xii) համապատասխան ապահովագրական փաթեթ ձեռք բերելու անկարողություն, (xiii) նյութերի և սարքավորումների բացակայություն, (xiv) տեխնիկական հատկորոշումների կամ ակնկալիքների համաձայն սարքավորումների աշխատելու կամ գործընթացների ընթանալու անկարողություն, (xv) անկանխատեսելի դժվարություններ՝ ձեռք բերված միավորումների համախմբման և ակնկալվող միասնության ձեռք բերման հետ կապված և (xvi) ֆինանսավորում ստանալու փորձերի արդյունքները և ֆինանսական շուկայի պայմանները:

(բ) Պղնձի և մոլիբդենի գների տատանումներ

Խմբի ֆինանսական գործունեության արդյունքները զգալիորեն կախված են պղնձի գնից, որի վրա ազդեցություն ունեն Խմբի հսկողության սահմաններից դուրս գտնվող բազմաթիվ գործոններ: Պղնձի առք ու վաճառքն իրականացվում է Լոնդոնի մետաղների բորսայում (ԼՄԲ), Նյու Յորքի ապրանքային բորսայում (COMEX) և Շանհայի ֆյուչերսների բորսայում (ՇՖԲ): Ընկերությունը պղինձը վաճառվում է ԼՄԲ-ի գնանշվող գներով: Այս բորսայում ներկայացվող պղնձի գնի վրա նշանակալի ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ, ներառյալ՝ (i) պղնձի պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունն աշխարհի մասշտաբով, (ii) համաշխարհային տնտեսության աճի տեմպերը, արդյունաբերական միտումները և բնակարանաշինության ու ավտոմոբիլային արդյունաբերության պայմանները, որոնք բոլորը կապակցված են պղնձի պահանջարկի հետ, (iii) Չինաստանի տնտեսական աճն ու քաղաքական պայմանները, որը դարձել է մաքուր պղնձի աշխարհի ամենախոշոր սպառողը, և այլ զարգացող երկրներինը, (iv) սպեկուլյատիվ ներդրումային դիրքերը պղնձի և պղնձի ֆյուչերսների հետ կապված, (v) փոխարինող նյութերի առկայությունը և արժեքը և (vi) արտարժույթի փոխարժեքի տատանումները, ներառյալ ԱՄՆ դոլարի համեմատական կայունությունը: Պղնձի շուկան բնորոշվում է փոփոխական և ցիկլային բնույթով: 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ԼՄԲ-ի օրվա վերջի փակման սփոթ գինը մեկ տոննա պղնձի համար կազմել է 7,000 ԱՄՆ դոլարից 10,730 ԱՄՆ դոլար, միջինը՝ 8,797 ԱՄՆ դոլար մեկ տոննայի համար: 2023թ. ապրիլի 14-ին ԼՄԲ-ի փակման սփոթ գինը մեկ տոննա պղնձի համար կազմել է 9,082 ԱՄՆ դոլար:

Խմբի ֆինանսական գործունեության արդյունքները զգալիորեն կախված են նաև մոլիբդենի գնից: Մոլիբդենի գինը փոփոխական և ցիկլային է ինչպես պղնձինը, եթե ոչ ավելի: Մոլիբդենի գնի վրա նշանակալի ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ, ներառյալ՝ (i) մոլիբդենի պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունն աշխարհի մասշտաբով, (ii) համաշխարհային տնտեսության աճի տեմպերը, հատկապես շինարարության և ենթակառուցվածքների ոլորտում, որոնք պահանջում են պողպատի զգալի պաշարներ, (iii) որպես պղնձի արտադրության հավելյալ արտադրատեսակ արտադրվող մոլիբդենի ծավալները, (iv) պաշարների ծավալները, (v) արտարժույթի փոխարժեքի տատանումները, ներառյալ ԱՄՆ դոլարի համեմատական կայունությունը և (vi) ԱՄՆ-ի և արտերկրյա մրցակիցների արտադրական ծախսերը: Մոլիբդենի պահանջարկը զգալիորեն կախված է պողպատի համաշխարհային արդյունաբերությունից, որտեղ այս մետաղն օգտագործում է որպես կարծրացնող և քայքայումը կանխարգելող նյութ: Մոլիբդենի արտադրության մոտավորապես 80 տոկոսը օգտագործվում է այս նպատակի համար: Մնացած պաշարներն օգտագործվում են մասնագիտացված քիմիկատների, մասնավորապես, կատալիզատորների, ջրազերծման ռեակտիվների, քսանյութերի արտադրությունում: Մոլիբդենի համաշխարհային պաշարների մոտավորապես 65 տոկոսը հանդիսանում է պղնձի արդյունահանման հավելյալ արտադրանք, որն այդքան էլ մեծ ազդեցության չի

ենթարկվում մոլիբդենի գներից: 2022թ. ընթացքում մոլիբդենի միջին գինը կազմել է մոտավորապես 41,290 ԱՄՆ դոլար մեկ տոննայի համար՝ ի համեմատություն 2021թ-ին գրանցված 34,192 ԱՄՆ դոլարի: 2023թ. ապրիլի 14-ին ԼՄԲ-ի սփոթ գինը մեկ տոննա մոլիբդենի համար կազմել է 37,479 ԱՄՆ դոլար:

Մոլիբդենի և պղնձի ցածր գների գերակայման երկարատև ժամանակաշրջանը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի շահույթի և դրամական հոսքերի վրա:

34. Կապակցված կողմեր

(ա) Մայր կազմակերպություն և վերջնական հսկող կողմ

Խմբի սեփականատերերի կառուցվածքը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում: Խմբի վերջնական հսկող անձն է հանդիսանում Գլեբ Տրոցենկոն:

Խմբի վերջնական մայր ընկերությունը կամ որևէ այլ միջանկյալ մայր ընկերությունը չի հրապարակում համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

(բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

(i) Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է անձնակազմի գծով ծախսերում:

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Աշխատավարձ և պարգևավճարներ	**2,207,178**	**1,233,365**

(գ) Այլ գործարքներ կապակցված կողմերի հետ

հազ. դրամ	**Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**		**Մնացորդը առ 31 դեկտեմբերի**	
	2022թ.	**2021թ.**	**2022թ.**	**2021թ.**
Ապրանքներ և ծառայությունների վաճառք				
Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	13,770,242	800	12,010,536	145,080
Ապրանքների գնում				
Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	306,661	6,198	(370,084)	(30,000)
Ստացված ծառայություններ				
Բաժնետերեր	6,671,501	14,689,690	(620,993)	(911,593)
Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	488,278	-	(109,455)	-
Տրամադրված նվիրատվություններ				
Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	3,143,942	2,365,850	-	-
Տրված կանխավճարներ				
Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	-	-	150,000	-
Տոկոսային եկամուտ				
Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	1,195,255	-	1,129,677	-
Տրամադրված փոխառություններ				
Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	33,953,175	-	33,831,352	-

Գործարքների մնացորդները գրավով ապահովված չեն: Կապակցված կողմերի հետ գործարքների բոլոր մնացորդները ենթակա են մարման կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետ վեց ամսվա ընթացքում: Ընթացիկ կամ նախորդ տարում չեն ճանաչվել անհուսալի կամ կասկածելի պարտքերի գծով ծախսեր կապակցված կողմերի պարտքերի հետ կապված:

35. Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ պայմանականորեն գնանշվող առևտրական դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

36. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների և Խմբի անդամ ընկերությունների համար:

(ա) Համախմբման հիմունքներ

(i) Դուստր ընկերություններ

Դուստր ընկերությունները Խմբի կողմից հսկվող ընկերություններ են: Խումբը հսկողություն ունի ընկերությունների նկատմամբ, եթե այդ ընկերություններում իր ներգրավվածության արդյունքում ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և ընկերության նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն: Խումբը ներառում է դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները համախմբված ֆինանսական հաշվետվություններում դուստր ընկերության նկատմամբ հսկողություն ձեռք բերելու ամսաթվից մինչև դուստր ընկերության նկատմամբ հսկողությունը կորցնելու ամսաթիվը: Անհրաժեշտության դեպքում դուստր ընկերությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունում կատարվում են փոփոխություններ՝ Խմբի կողմից որդեգրված քաղաքականության հետ համապատասխանություն ապահովելու նպատակով: Դուստր ընկերությունում չհսկող բաժնեմասերին բաժին ընկնող վնասը վերագրվում է չհսկող բաժնեմասերին, նույնիսկ եթե դա հանգեցնում է չհսկող բաժնեմասերում պակասորդային մնացորդի:

(ii) Հսկողության կորուստ

Եթե Խումբը կորցնում է դուստր ընկերության նկատմամբ իր հսկողությունը, այն ապաճանաչում է դուստր ընկերության ակտիվները և պարտավորությունները, ցանկացած չհսկող բաժնեմասերը և դուստր ընկերությանը վերագրելի՝ սեփական կապիտալի ցանկացած բաղադրիչները: Հսկողության կորստի արդյունքում առաջացող ցանկացած ավելցուկ կամ պակասորդ ճանաչվում է շահույթում կամ վնասում: Եթե Խումբը պահպանում է իր ներդրման որևէ մասը նախկին դուստր ընկերությունում, այդ ներդրումը չափվում է իրական արժեքով հսկողությունը կորցնելու ամսաթվի դրությամբ: Հետագայում այն հաշվառվում է որպես բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտ կամ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվ՝ կախված պահպանված ազդեցության չափից:

(iii) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ

Ներխմբային հաշվարկների մնացորդները և գործարքները, ինչպես նաև ներխմբային գործարքներից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը բացառվում են:

(բ) Հասույթ

Խումբը հիմնականում զբաղվում է պղնձի/մոլիբդենի խտանյութի արտադրությամբ և որոշ դեպքերում մատուցում է բեռնափոխադրման/առաքման ծառայություններ: Գնորդների հետ պայմանագրերից հասույթը ճանաչվում է, երբ ապրանքների և ծառայությունների նկատմամբ հսկողությունը փոխանցվում է գնորդին այն գումարով, որն արտացոլում է այն հատուցումը, որը Խումբն ակնկալում է ստանալ այդ ապրանքների կամ ծառայությունների դիմաց՝ որպես փոխանակում:

Պայմանագրի գծով մնացորդներ

Պայմանագրի գծով ակտիվներ

Պայմանագրի գծով ակտիվը գնորդին փոխանցված ապրանքների կամ ծառայությունների դիմաց, որպես փոխանակում, հատուցում ստանալու իրավունքն է: Եթե Խումբն ապրանքների և ծառայությունների փոխանցումն իրականացնում է մինչև գնորդի կողմից հատուցումը վճարելը կամ մինչև դրա՝ վճարման ենթակա դառնալը, պայմանագրի գծով ակտիվը ճանաչվում է վաստակած հատուցման համար, որը վերապահումով է: Խումբը չունի պայմանագրի գծով ակտիվ, քանի որ կատարումը և հատուցման նկատմամբ իրավունքի ձեռքբերումը տեղի է ունենում կարճ ժամանակահատվածում և հատուցման նկատմամբ բոլոր իրավունքներն անվերապահ են:

Առևտրական դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքն իրենից ներկայացնում է Խմբի իրավունքը հատուցման նկատմամբ, որը անվերապահ է (այսինքն՝ պահանջվում է ժամանակահատված մինչև որ հատուցումը կդառնա վճարման ենթակա):

Պայմանագրի գծով պարտավորություններ

Պայմանագրի գծով պարտավորությունը գնորդին ապրանքներ և ծառայություններ փոխանցելու պարտականությունն է, որի դիմաց Խումբը գնորդից ստացել է հատուցում (կամ ունի հատուցման գումար, որը ենթակա է ստացման): Եթե գնորդը վճարում է հատուցումը մինչև Խմբի կողմից ապրանքների կամ ծառայությունների փոխանցումը գնորդին, պայմանագրի գծով պարտավորությունը ճանաչվում է վճարումը կատարելու կամ վճարումը կատարման ենթակա դառնալու պահին (կախված նրանից, թե որն է ավելի վաղ տեղի ունենում): Պայմանագրի գծով պարտավորությունները ճանաչվում են որպես հասույթ, երբ Խումբն այն իրականացնում է պայմանագրի համաձայն:

Ժամանակ առ ժամանակ Խումբը ճանաչում է պայմանագրի գծով պարտավորություններ մետաղի խտանյութի վաճառքի գծով, որը վաճառվում է Ինկոտերմսի CIP պայմաններով, որի դեպքում դրամական միջոցների մի մասը կարող է ստացվել գնորդից մինչև բեռնափոխադրման/առաքման ծառայությունների մատուցումը: Պայմանագրի գծով պարտավորությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 30-ում:

Պղնձի/մոլիբդենի խտանյութի (մետաղի խտանյութի) վաճառք

Խմբի մետաղի խտանյութի վաճառքների մեծամասնությունը հնարավորություն է տալիս ճշգրտել գինը՝ հիմք ընդունելով շուկայական գինը պայմանագրով սահմանված համապատասխան գնորոշման ժամանակաշրջանի վերջում: Այդ պայմանավորվածությունները կոչվում են պայմանական գնանշման համաձայնագրեր, որոնց դեպքում մետաղի խտանյութի վաճառքի գինը հիմնված է գնորդին առաքումից հետո որոշակի ապագա ամսաթվին գերակայող սփոթ գների վրա: Վաճառքի գնի ճշգրտումներն իրականացվում են մինչև գնորոշման ժամանակաշրջանի վերջը շուկայական գների փոփոխությունների հիման վրա: Նախնական հաշվի ներկայացման և գնորոշման ժամանակաշրջանի վերջի միջև ընկած ժամանակահատվածը կարող է լինել մեկից երեք ամիս:

Հասույթը ճանաչվում է այն ժամանակ, երբ հսկողությունը անցնում է գնորդին, ինչը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մետաղի խտանյութը ֆիզիկապես տեղափոխվում է նավի, գնացքի, փոխադրողի կամ առաքման այլ մեխանիզմի վրա: Հասույթը չափվում է այն գումարի չափով, որի նկատմամբ Խումբն ակնկալում է ստանալ իրավունք, որն իրենից ներկայացնում է գնորոշման ժամանակաշրջանի վերջում ակնկալվող ստացվելիք գնի գնահատականը, այսինքն՝ ֆորվարդի գինը, և ճանաչվում է համապատասխան առևտրական դեբիտորական պարտք: CIP առաքման պայմաններին ենթակա համաձայնեգրի համար, պայմանագրային գնի մի մասը բաշխվում է առանձին մատուցված բեռնափոխադրման/առաքման ծառայություններին:

Այս պայմանական գնանշված համաձայնագրերի համար, գնորոշման ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած ցանկացած ապագա փոփոխություն ներկառուցվում է պայմանականորեն գնանշված առևտրական դեբիտորական պարտքերում և, հետևաբար, գտնվում են ՖՀՄՍ 9-ի և ոչ՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Հաշվի առնելով ենթարկվածությունն ապրանքների գների փոփոխությունների ռիսկին ՝ պայմանականորեն գնանշված այս առևտրական դեբիտորական պարտքերը չեն համապատասխանում ՖՀՄՍ 9-ի դրամական միջոցների հոսքերի բնութագրերին, և սկզբնական ճանաչումից մինչև մարման ամսաթիվը պետք է չափվեն իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Իրական արժեքի հետագա փոփոխությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում յուրաքանչյուր հաշվետվու ժամանակաշրջանում և ներկայացվում են որպես հասույթի ճշգրտումներ:

Գնորոշման ժամանակաշրջանի ընթացքում մինչև դրա վերջը տեղի ունեցած իրական արժեքի փոփոխությունները գնահատվում են հիմք ընդունելով ոսկու և պղնձի թարմացված ֆորվարդային շուկայական գները, ինչպես նաև հաշվի առնելով ՖՀՄՍ 13-ով սահմանված իրական արժեքի հետ կապված այլ համապատասխան նկատառումները, ներառյալ՝ տոկոսադրույքային և պարտքային ռիսկի ճշգրտումները:

Բեռնափոխադրման/առաքման ծառայություններ

Ինչպես վերը նշված է, մետաղի խտանյութի Խմբի վաճառքների մի մասն իրականացվում է Ինկոտերմսի CIP պայմաններով, որի դեպքում Խմբի կողմից գնորդին մետաղի խտանյութի նկատմամբ հսկողությունը փոխանցելու ամսաթվից հետո Խումբը պատասխանատվություն է կրում բեռնափոխադրման/առաքման ծառայությունների մատուցման համար (որպես պրինցիպալ): Հետևաբար, Խումբն ունի առանձին կատարման պարտականություն բեռնափոխադրման/առաքման ծառայությունների գծով, որոնք մատուցվում է միայն արտադրված ապրանքների վաճառքը հեշտացնելու համար:

Խմբի կողմից սովորաբար օգտագործվող Ինկոտերմսի այլ պայմաններից են CPT (փոխադրումը վճարած մինչև) և FCA, որոնց դեպքում Խումբը պատասխանատվություն չի կրում բեռնափոխադրման կամ ապահովագրության համար այն պահից, երբ ապրանքների նկատմամբ հսկողությունը փոխանցվում է Երևանում բեռնման վայրում, և DAP (հասցրած մինչև համաձայնեցված վայր), երբ ապրանքների նկատմամբ հսկողությունը փոխանցվում է, երբ ապրանքը առաքվում է համաձայնեցված վայր: Ինկոտերմսի պայմաններին բավարարող այս պայմանագրերի դեպքում միակ կատարման պարտականությունն ապրանքների տրամադրումն է այն պահին, երբ փոխանցվում է հսկողությունը:

CIP պայմանագրերի համար, պայմանագրային գինը (ինչպես նշված է վերևում) բաշխվում է մետաղի խտանյութի և բեռնափոխադրման/առաքման ծառայություններին՝ օգտագործելով առանձին վաճառքի գնի մեթոդը: Այս պայմանագրերի համաձայն, հատուցման մի մասը գնորդից կարող է ստացվել կանխիկ՝ նախնական հաշվում նշված առաքման ամսաթվին կամ դրան մոտ ամսաթվին: Այդ իսկ պատճառով, բեռնափոխադրման/առաքման ծառայություններին վերաբերող դեռևս չտրամադրված որոշ սկզբնավճարներ հետաձգվում են: Դրանք հետագայում ճանաչվում են որպես հասույթ այն ժամանակ, երբ Խումբը կատարում է կատարման պարտականությունը: Այս բեռնափոխադրման/առաքման ծառայությունների հետ կապված ծախսերը նույնպես ճանաչվում են այն ժամանակ, երբ Խումբը կատարում է կատարման պարտականությունը:

Բեռնափոխադրման/առաքման ծախսերի վճարումը կարող է տեղի ունենալ մինչև ծառայությունների մատուցումը (և, հետևաբար, ճանաչվում է որպես պայմանագրի գծով պարտավորություն): Վերջին մասը վճարվում է ծառայությունների մատուցման ավարտից հետո: Սկզբնավճարների ստացման և բեռնափոխադրման/առաքման ծառայությունների մատուցման ավարտի միջև ընկած ժամանակահատվածը սովորաբար կազմում է մինչև չորս ամիս է: Հաշվի առնելով այս գումարների չափը և կանխիկ դրամական միջոցների ստացման և կատարման պարտականության կատարման միջև ընկած կարճ ժամանակահատվածը՝ Խումբն օգտվել է ազատումից, որը հնարավորություն է տալիս չճշգրտել խոստացած հատուցումը ֆինանսավորման նշանակալի բաղադրիչի ազդեցությունն արտացոլելու համար, քանի որ գնորդին խոստացած ապրանքի կամ ծառայության փոխանցման և գնորդի կողմից այդ ապրանքի կամ ծառայության դիմաց վճարման միջև ընկած ժամանակահատվածը մեկ տարի է կամ պակաս:

Պրինցիպալ՝ գործակալ համեմատություն

Խումբը, ընդհանուր առմամբ, եզրահանգել է, որ հանդես է գալիս որպես պրինցիպալ այն պայմանագրերում, որոնցից հասույթ է ստանում, քանի որ որպես կանոն հսկում է ապրանքները և ծառայությունները մինչև դրանք գնորդին փոխանցելը:

Ինկոտերմսի CIP պայմաններին ենթակա որոշ համաձայնագրերի շրջանակում Խումբը պարտավոր է մատուցել բեռնափոխադրման/առաքման ծառայություններ: Թեև Խումբն փաստացի չի տրամադրում կամ գործարկում նավեր, բեռնատար մեքենաներ կամ գնացքներ, Խումբը որոշել է, որ այս համաձայնագրերում հանդիսանում է պրինցիպալ, քանի որ եզրահանգել է որ հսկում է որոշակի ծառայությունը մինչև դրա մատուցումը հաճախորդին: Սրա հիմքում ընկած է այն հանգամանքը, որ Խումբը ձեռք է բերում բեռնափոխադրման/առաքման ծառայություններ մատուցելու իրավունքի նկատմամբ հսկողությունը հաճախորդի հետ պայմանագիր կնքելուց հետո, բայց մինչև նրան այդ ծառայությունները մատուցելը: Խմբի՝ ծառայությունները մատուցողի հետ պայմանագրի պայմանները Խմբին հնարավորություն են տալիս հանձնարարել նրան մատուցել նշված ծառայությունները Խմբի անունից:

Բացի դրանից, Խումբը եզրահանգել է, որ ստորև ներկայացված հայտանիշները վկայում են առ այն, որ Խումբը հսկում է բեռնափոխադրման/առաքման ծառայությունները մինչև դրանք գնորդին մատուցելը:

- Խումբը գլխավորապես պատասխանատու է բեռնափոխադրման/առաքման ծառայություններ մատուցելու խոսումը կատարելու համար: Թեև Խումբը գնորդին խոստացած ծառայությունները մատուցելու համար վարձել է ծառայություններ մատուցողի, Խումբն ինքն է պատասխանատու ծառայությունների մատուցումը և գնորդի համար դրանց ընդունելի լինելն ապահովելու համար (այսինքն՝ Խումբը պատասխանատու է պայմանագրում նշված խոստումը կատարելու համար, անկախ այն հանգամանքից, թե Խումբն ինքն է մատուցում ծառայությունները, թե ծառայությունները մատուցելու համար ներգրավում է երրորդ կողմ հանդիսացող ծառայություններ մատուցողի):

- Գնորդին մատուցվող ծառայությունների գինը Խումբը որոշում է իր հայեցողությամբ, քանի որ այն բանակցվում է ուղղակիորեն գնորդի հետ:

Բեռնափոխադրման/առաքման ծառայությունների կատարման ժամկետի որոշումը

Խումբը եզրահանգել է, որ բեռնափոխադրման/առաքման ծառայություններից հասույթը պետք է ճանաչվի ժամանակի ընթացքում, քանի որ գնորդը միաժամանակ ստանում և սպառում է Խմբի կողմից տրամադրված օգուտները: Այն փաստը, որ այլ կազմակերպությունից չի պահանջվել կրկին մատուցել Խմբի կողմից մինչ այդ ամսաթիվը մատուցված բեռնափոխադրման/առաքման ծառայությունները, վկայում է այն մասին, որ գնորդը միաժամանակ ստանում և սպառում է Խմբի կատարման պարտականություններից օգուտները կատարմանը զուգընթաց: Խումբը որոշել է, որ բեռնափոխադրման/առաքման ծառայությունների առաջընթացը չափելու համար լավագույն մեթոդը ռեսուրսների մեթոդն է, քանի որ այստեղ Խմբի ջանքերի (այսինքն՝ անցած ժամանակի) և գնորդին ծառայության փոխանցման միջև գոյություն ունի ուղիղ կապ: Խումբը հասույթը ճանաչում է ծառայության մատուցումն ավարտելու համար ակնկալվող ընդհանուր ժամանակահատվածի և անցած ժամանակի հարաբերակցության հիման վրա:

(գ) Ֆինանսական եկամուտ/(ծախսեր)

Խմբի ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային ծախսը,
- տեղանքի վերականգնման պահուստի գծով զեղչի ծախսագրումը,
- փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ կորուստը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով:

Տոկոսային ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

– ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
– ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Տոկոսային ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

(դ) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են ՀՀ դրամի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ՀՀ դրամի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ կորուստն իրենից ներկայացնում է տարբերությունը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների և վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված արտարժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ՀՀ դրամի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Արտարժույթի վերափոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(ե) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես աշխատակցի անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(զ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հոդվածներին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները: Ընդհանուր ընթացիկ հարկը ներառում է ընթացիկ շահութահարկը և ռոյալթին:

(ii) Ռոյալթի

Բացի շահութահարկից, Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառվում են նաև և ճանաչում են որպես շահույթի գծով հարկ զուտ շահույթի գծով այլ հարկատեսակները:

Ռոյալթիները, ռեսուրսների վարձավճարների գծով հարկերը և հասույթի վրա հիմնված հարկերը հաշվառվում են համաձայն ՀՀՄՍ 12-ի, երբ համապատասխանում են շահութահարկի բնութագրերին: Դա տեղի է ունենում այն դեպքում, երբ հարկերը գանձվում են պետական մարմնի կողմից և վճարվելիք գումարը հիմնված է հարկվող շահույթի վրա, այլ ոչ արտադրանքի ֆիզիկական ծավալի վրա կամ դիտարկվում որպես տոկոս հասույթից՝ ժամանակավոր տարբերությունների մասով ճշգրտումից հետո: Նման համաձայնությունների համար ընթացիկ և հետաձգված շահութահարկը հաշվարկվում է նույն հիմքերով, ինչպես և վերը նշված հարկման այլ ձևերի համար: Ռոյալթիների և այլ հարկատեսակների գծով առաջացող պարտավորությունները, որոնք չեն բավարարում այս չափանիշներին, ճանաչվում են որպես ընթացիկ պահուստներ և ներառվում են այլ ծախսերում:

Ռոյալթիները հաշվարկելիս կիրառվում են այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ: Ռոյալթիները ճանաչվում են շահույթում կամ վնասում տարեկան կտրվածքով՝ հիմք ընդունելով հասույթի և հարկվող շահույթի համակցությունը՝ ճշգրտված կիրառելի օրենքների և կանոնակարգերի ուղեցույցների և պահանջների համաձայն: Ռոյալթիները բաղկացած են երկու բաղադրիչից՝ հասույթի 4%-ի չափով հաշվարկվող ռոյալթի և հարկվող շահույթի 12.5%-ի չափով հաշվարկվող ռոյալթի՝ ճշգրտված կիրառելի օրենքների և կանոնակարգերի ուղեցույցների և պահանջների համաձայն:

Ղեկավարությունը գտնում է, որ ռոյալթիների գծով ծախսը չի դիտարկվում որպես շահութահարկ, քանի որ ընդհանուր հասույթի գործոնը (համախառն չափորոշիչ) նշանակալի է վճարվելիք ռոյալթիի գումարի հաշվարկում: Ռոյալթիները հաշվառվում են որպես այլ գործառնական ծախսեր:

(iii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում՝

- ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ոչ հաշվապահական և ոչ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- դուստր ընկերությունների ներդրումների գծով նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այնքանով, որքանով հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները չեն մարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Խումբն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Խմբի դուստր ընկերությունների գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբը տվյալ պահին ունի ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներ զուտ հիմունքով, կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

Ընթացիկ և հետաձգված հարկի գումարը որոշելիս՝ Խումբը հաշվի է առնում անորոշ հարկային դիրքերի ազդեցությունը և լրացուցիչ հարկերի, տուգանքների և վճարումների ուշացման համար տոկոսների վճարման հնարավորությունը: Խումբը գտնում է, որ հարկային պարտավորությունների գծով հաշվեգրումները բավարար են բոլոր չստուգված հարկային տարիների համար՝ հիմք ընդունելով բազմաթիվ գործոնների իր գնահատականը՝ այդ թվում հարկային օրենսդրության մեկնաբանությունները և նախկին տարիների փորձը: Այս գնահատականը հիմնված է գնահատումների և ենթադրությունների վրա և կարող է ներառել մի շարք դատողություններ ապագա իրադարձությունների վերաբերյալ: Կարող է ի հայտ գալ նոր տեղեկատվություն, որը կարող է դրդել Խմբին փոխել իր դիրքորոշումը գոյություն ունեցող հարկային պարտավորությունների բավարար լինելու մասին: Հարկային պարտավորությունների նման փոփոխություններն ազդեցություն կունենան հարկի գծով ծախսի վրա այն ժամանակաշրջանում, որում կատարվել է նման գնահատումը:

(է) Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է կշռված միջինի սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման, արտադրության կամ վերամշակման ծախսումները և պաշարները ներկայիս վայր և առկա վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում, ինքնարժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ գնահատված ծախսումները:

(ը) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Հիմնական միջոցների սկզբնական արժեքը ՖՀՄՍ-ներին անցման ամսաթվի՝ 2005թ. հունվարի 1-ի դրությամբ որոշվել է այդ ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքի հիման վրա:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի և աշխատուժի գծով ծախսումները, նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած այլ ծախսումները, հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև դրանց զբաղեցրած տեղանքի վերականգնման ծախսումները և կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես այդ սարքավորման մաս:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղադրիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված օգուտը և վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ հավանական է, որ Խումբ կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարմանը զուգընթաց:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Արտադրական հոսքագծում օգտագործվող ակտիվների գծով մաշվածությունը հաշվարկվում է թողարկված միավորների մեթոդը՝ հիմք ընդունելով հանքաքարի գնահատված պաշարները և փաստացի արդյունահանված և մշակված հանքաքարը: Բոլոր այլ ակտիվների գծով մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն ավելի ճիշտ է արտացոլում ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների ստացման մոդելը: Հողատարածքների գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

• Շենքեր	
– արտադրամասերի շենքեր և շինություններ	թողարկված միավորների մեթոդ Միջին հզորություն՝ 18-ից 352 միլիոն տոննա
– այլ շենքեր	10-ից 100 տարի
• Մեքենաներ և սարքավորումներ	
– մեքենաներ և սարքավորումներ թափոնների տեղափոխման և հեռացման համար	թողարկված միավորների մեթոդ Միջին հզորություն `18-ից 352 միլիոն տոննա
– այլ մեքենաներ և սարքավորումներ	2-ից 100 տարի
• Հանքարդյունաբերական շինություններ	25 տարի
• Տնտեսական գույք	2-ից 70 տարի

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(iv) Հանքարդյունաբերական գույք

Արտադրական փուլի ընթացքում կրած մակաբացման ծախսումներից որպես կանոն կարելի է ստանալ երկու տեսակի օգուտ՝ պաշարների արտադրություն կամ բարելավված հասանելիություն հանքաքարին, որը կարդյունահանվի հետագա ժամանակաշրջաններում: Այն դեպքում, երբ մակաբացման գործունեությունից առաջացող օգուտն արտահայտվում է ժամանակաշրջանի ընթացքում արտադրված պաշարների տեսքով, մակաբացման ծախսումները հաշվառվում են որպես այդ պաշարների արտադրման ծախսումների մաս:

Երբ ստացվող օգուտն արտահայտվում է հետագա ժամանակաշրջաններում արդյունահանման ենթակա հանքաքարի հասանելության բարելավման տեսքով, այս ծախսումները ճանաչվում են որպես ոչ ընթացիկ ակտիվ, որն անվանվում է «մակաբացման գործունեության ակտիվ» կամ «հանքարդյունաբերական գույք»՝ հետևյալ չափանիշները բավարարելու դեպքում.

- հավանական է, որ մակաբացման գործունեության հետ կապված ապագա տնտեսական օգուտները (հանքաքարի հասանելության բարելավում) կհոսեն կազմակերպություն,
- կազմակերպությունը կարող է նույնականացնել հանքաքարի այն բաղադրիչը, որին հասանելիությունը բարելավվել է, և
- այդ բաղադրիչի գծով մակաբացման գործունեության ծախսումները կարող են արժանահավատորեն չափվել:

Վերը նշված չափանիշներից որևէ մեկը չբավարարելու դեպքում, մակաբացման արտադրական ծախսումները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում որպես գործառնական ծախսեր կատարվելու ժամանակ կամ ներառվում են արտադրված պաշարների ինքնարժեքում:

Հանքաքարի բաղադրիչները նույնականացնելիս Խումբը սերտորեն համագործակցում է հանքարդյունաբերական գործունեության բաժնի աշխատակիցների հետ՝ հանքավայրի պլանը վերլուծելու համար: Որպես կանոն, բաղադրիչը հանդիսանում է ընդհանուր հանքային մարմնի ենթաբազմությունը, և հանքը կարող է բաղկացած լինել մի քանի բաղադրիչներից: Մակաբացման գործունեության ակտիվի սկզբնական չափվումն իրականացվում է սկզբնական արժեքով, որը հանքաքարի նույնականացված բաղադրիչին հասանելիությունը բարելավող՝ մակաբացմանն ուղղակիորեն վերաբերող ծախսումների հանրագումարն է՝ գումարած ուղղակիորեն վերագրելի վերադիր ծախսերի տեղաբաշխումը:

Մակաբացման արտադրական ծախսումներն արտադրված պաշարների և մակաբացման գործունեության ակտիվի միջև բաշխելու համար օգտագործվում է արտադրության համապատասխան չափանիշ: Արտադրության այդ չափանիշը հաշվարկվում է հանքաքարի նույնականացված բաղադրիչի համար և օգտագործվում է որպես ուղենիշ՝ որոշելու ապագա օգուտների ստեղծման համար տեղի ունեցած լրացուցիչ գործունեությունների ծավալները: Խումբն օգտագործում է յուրաքանչյուր բաղադրիչի համար հանքաքարի արտադրության տվյալ ծավալների համար արդյունահանված թափոնների ծավալները՝ համեմատած ակնկալվող ծավալների հետ:

Մակաբացման գործունեության ակտիվը հաշվառվում է որպես գոյություն ունեցող ակտիվի՝ հանքարդյունաբերական ակտիվի լրացում կամ բարելավում և ներկայացվում է որպես հիմնական միջոցների մաս ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Մակաբացման գործունեության ակտիվի մաշվածությունը հետագայում հաշվարկվում է կիրառելով թողարկված միավորների մեթոդը հանքային մարմնի նույնականացված բաղադրիչի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում, որի հասանելիությունը բարելավվել է մակաբացման գործունեության արդյունքում: Տնտեսապես փոխհատուցելի պաշարները, որոնք ներառում են առկա և հնարավոր պաշարները, օգտագործվում են հանքային մարմնի նույնականացված բաղադրիչի ակնկալվող օգտակար ծառայությունը որոշելու համար: Մակաբացման գործունեության ակտիվն այնուհետև հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Հանքարդյունաբերական գույքը ներառում է նաև հետախուզման և գնահատման ծախսումները, որոնք վերաբերում են նախքան հանքի մշակման աշխատանքները սկսելն Խմբի կողմից հանքաքարի պոտենցիալ պաշարների հետախուզման և գնահատման ժամանակ կրած ծախսումներին, ինչպես նաև հանքի մշակման ծախսումները, որոնք ներառում են երկրաբանական և գեոֆիզիկական ուսումնասիրությունների, հետախուզական հորատման ու նմուշների փորձարկման ծախսումները, մոնտաժման և արտադրական սարքավորումների գծով ծախսումները, սկզբնական մակաբացման ծասխումները և նման աշխատանքների հետ կապված վերադիր ծախսերը:

(թ) Ֆինանսական գործիքներ

(i) Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրական դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են սկզբնավորման ժամանակ: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հոդվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքը սկզբնապես չափվում է գործարքի գնով:

(ii) Դասակարգում և հետագա չափում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային գործիքներում ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային գործիքներում ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում փոփոխության ազդեցությունը կրող բոլոր ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այս ակտիվները ներառում են բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Ֆինանսական ակտիվներ. Բիզնես մոդելի գնահատում

Խումբը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ստանալ պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտը, ապահովել տոկոսադրույքների որոշակի կառուցվածքը, ֆինանսական ակտիվների ժամկետները համապատասխանեցնել համապատասխան ֆինանսական պարտավորությունների ժամկետներին կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Խմբի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):
- նախորդ ժամանակաշրջաններում ֆինանսական ակտիվների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Խումբը շարունակում է ճանաչել այդ ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակների համար կամ կառավարվում են և որոնց ստեղծած արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ. Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Խումբը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը կամ ժամկետները,
- պայմանները, որոնք կարող են ճշգրտել պայմանագրային արժեկտրոնային տոկոսադրույքը, այդ թվում՝ փոփոխական տոկոսադրույքի պայմանները
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Խմբի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ֆինանսական ակտիվ):

Վաղաժամ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղավճարման գումարն ըստ էության իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ փոխհատուցում: Բացի այդ, պայմանագրի անվանական արժեքի նկատմամբ զեղչով կամ հավելագնով ձեռքբերված ֆինանսական ակտիվի համար վաղաժամ մարում թույլատրող կամ պահանջող պայմանն այն գումարով, որն ըստ էության իրենից ներկայացնում է պայմանագրային անվանական արժեքը գումարած հաշվեգրված (սակայն չվճարված) պայմանագրային տոկոսը (որը կարող է ներառել լրացուցիչ ողջամիտ փոխհատուցումը պայմանագրի վաղաժամ դադարեցման համար), դիտարկվում է որպես նշված չափանիշին համապատասխանող, եթե վաղաժամկետ մարման հատկանիշի իրական արժեքն աննշան է սկզբնական ճանաչման պահին:

Ֆինանսական ակտիվներ. Հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ. Դասակարգում, հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախորոշված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով զուտ օգուտը և կորուստները, ներառյալ՝ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ

վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտը կամ կորուստը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Խումբը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Խումբը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանության (օրինակ՝ փոխարկման պայմանի ներառում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Խումբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ կորուստ՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես վերաբանակցված կամ փոփոխված պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեք, որոնք զեղչվում են ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխանակումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Խումբը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Խումբը ճանաչում է

փոփոխության (կամ փոխանակման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտում շահույթում կամ վնասում՝ փոփոխության (կամ փոխանակման) ամսաթվի դրությամբ: Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները՝ հանած ստացված վճարները, որոնք զեղչված են սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխումը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես մարումից օգուտի կամ կորստի մաս: Եթե փոխանակումը կամ պայմանների փոփոխումը չի հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված պարտավորության մնացած ժամանակահատվածում:

(iv) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Խումբը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Խումբն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են: Խումբը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ցանկացած ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(v) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն այն և միայն այն դեպքում, երբ Խումբը տվյալ պահին ունի գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

(v) Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումն իրականացվում է իրական արժեքով: Գործարքի վերագրելի ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ առաջանում են: Սկզբնական ճանաչումից հետո ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով, որի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Ներկառուցված ածանցյալ գործիքներն առանձնացվում են հիմնական պայմանագրից և հաշվառվում են առանձին, եթե ներկառուցված ածանցյալ գործիքի տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն հիմնական պայմանագրի տնտեսական բնութագրերի և ռիսկերի հետ, առանձին գործիքը, որի պայմանները նույնն են, ինչ ներկառուցված ածանցյալ գործիքինը, բավարարում է ածանցյալ գործիքի սահմանմանը, համակցված գործիքը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Առանզնացվող ներկառուցված ածանցյալ գործիքներ իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

(ժ) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական գործիքներ

Խումբը ճանաչում է կորստի պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից ակնկալվող պարտքային կորուստների գծով:

Առևտրական դեբիտորական պարտքերի գծով կորստի պահուստը միշտ չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Երբ Խումբը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Խմբի անցյալ ժամանակաշրջանների փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ապագայամետ տեղեկատվությունը:

Խումբը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե պայմանագրով նախատեսված վճարումները ժամկետանց են մեկ տարի: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում Խումբը կարող է նաև համարել, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե ներքին կամ արտաքին տեղեկատվությունը ցույց է տալիս, որ քիչ հավանական է, որը Խումբն ամբողջությամբ կստանա պայմանագրով նախատեսված չմարված գումարները՝ նախքան Խմբի կողմից պարտքի որակի բարելավման այլ միջոցները հաշվի առնելը: Ֆինանսական ակտիվը դուրս է գրվում, երբ չկա պայմանագրային դրամական հոսքերի վերականգնման ողջամիտ ակնկալիք և սովորաբար տեղի է ունենում, երբ ակտիվը դառնում է ավելի քան մեկ տարի ժամկետանց է և ենթակա չէ հարկադիր գործողությունների կիրառման:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն այն ակնկալվող պարտքային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո հաջորդող 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից (կամ ավելի կարճ ժամկետում, եթե ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետը պակաս է 12 ամսից):

Առավելագույն ժամկետը, որը դիտարկվում է ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, պայմանագրի առավելագույն ժամկետն է, որի ընթացքում Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկին:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները ֆինանսական գործիքի պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասորդների ներկա արժեք (պայմանագրին համապատասխան Խմբին հասանելիք դրամական հոսքերի և Խմբի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերություն):

Ակնկալվող պարտքային կորուստները գեղչվում ֆինանսական ակտիվի արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է՝ պարտազանցումը կամ ավելի քան 90 օր ժամկետանց դառնալը,
- Խմբի կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Խումբն այլ պայմաններում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ հաճախորդը կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի:

Ակնկալվող պարտքային կորուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, երբ Խումբը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների համար Խումբը կիրառում է համախառն հաշվեկշռային արժեքի դուրսգրման քաղաքականություն ֆինանսական ակտիվի ավելի քան 180 օր ժամկետանց լինելու դեպքում՝ հիմք ընդունելով նմանատիպ ակտիվների գծով գծով գումարների փոխհատուցման անցյալ ժամանակաշրջանների փորձը: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների համար Խումբն իրականացնում է դուրսգրման ժամկետների և գումարի առանձին գնահատում՝ ելնելով փոխհատուցման ողջամիտ ակնկալիքներից: Խումբը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելի գումարների փոխհատուցման հետ կապված Խմբի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումները: Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին կամ դրամաստեղծ միավորին հատուկ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորի (միավորների խմբի) ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցնելու նպատակով արժեզրկումից կորուստը բաշխվում է համամասնորեն:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու համար, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(h) Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալը դասակարգվում է որպես սեփական կապիտալ:

Լրացուցիչ կապիտալ

Սկզբնական ճանաչման պահին բաժնետերերի խմբի ընկերություններից շուկայական տոկոսադրույքից ցածր տոկոսադրույքով ստացված փոխառությունների իրական արժեքն իրենից ներկայացնում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի ներկա արժեքը՝ զեղչված շուկայական տոկոսադրույքով: Փոխառությունների անվանական արժեքի և սկզբնական ճանաչման պահին դրանց իրական արժեքի միջև տարբերությունը դասակարգվում է որպես լրացուցիչ կապիտալ՝ առանց հետաձգված հարկի:

(l) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ներկա պահին ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի գծով ծախսը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

(i) Տեղանքի վերականգնման գծով պահուստ

Խումբը կկրի տեղանքի վերականգնման ծախսերը կամ գործունեության ընթացքում կամ Խմբի հանքարդյունաբերական գույքի գործառնական կյանքի ավարտից հետո: Խումբը գնահատում է տեղանքի վերականգնման գծով պահուստը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ:

Տեղանքի վերականգնման գծով պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատե,: Այս վերականգնման գործողությունները ներառում են հանքի, թափոնների լցակույտերի, պոչամբարների և կից կառուցվածքների փակում և տուժած տարածքների վերականգնում, բարելավում և բուսականության վերականգնում:

Պարտավորության սկզբնական ճանաչման ժամանակ գնահատված ծախսերի ներկա արժեքը կապիտալացվում է՝ ավելացնելով համապատասխան հանքարդյունաբերական ակտիվների հաշվեկշռային արժեքը այն չափով, որքանով Խումբը կրել է այդ ծախսերը հանքի մշակման/կառուցման համար: Թափոնների լցակույտերի վերականգնման և հանքի փակման հետ կապված ծախսերը ներկայացվում են զուտ ներկա արժեքով և ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Տեղանքի վերականգնման գնահատված ժամկետների կամ գնահատված ապագա ծախսերի փոփոխությունները ճանաչվում են առաջընթաց՝ ճշգրտելով տեղանքի վերականգնման պարտավորությունը և ակտիվը, որին այն վերաբերում է, եթե նախնական գնահատումը սկզբնապես ճանաչվել է որպես ՀՀՄՍ 16-ի համաձայն չափված ակտիվի մաս, այլապես՝ փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Տեղանքի վերականգնման պարտավորության ցանկացած նվազեցում, և, հետևաբար, այն ակտիվի ցանկացած նվազեցում, որին այն վերաբերում է, չի կարող գերազանցել ակտիվի հաշվեկշռային արժեքը: Հակառակ դեպքում՝ հաշվեկշռային արժեքի գերազանցող մասը անմիջապես ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում:

Եթե գնահատման փոփոխությունը հանգեցնում է տեղանքի վերականգնման պարտավորության աճի և, հետևաբար, ակտիվի հաշվեկշռային արժեքի ավելացման, Խումբը դիտարկում է, թե արդյոք առկա են ակտիվի արժեզրկման հայտանիշեր և, նման հայտանիշների առկայության դեպքում, իրականացնում է արժեզրկման ստուգում:

Ժամանակի ընթացքում, զեղչված պարտավորությունն աճում է ներկա արժեքի փոփոխության մասով՝ հիմք ընդունելով զեղչման դրույքները, որոնք արտացոլում են ընթացիկ շուկայական գնահատումները և պարտավորությանը բնորոշ ռիսկերը: Զեղչման պարբերական ծախսագրումը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում՝ որպես ֆինանսական ծախսի մաս: Փակված տարածքների համար գնահատված ծախսերի փոփոխություններն անմիջապես ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

(խ) Համադրելի տեղեկատվություն

Նախորդ ժամանակաշրջանի որոշ համադրելի տեղեկատվություն վերադասակարգվում է ընթացիկ տարվա ներկայացման փոփոխությունների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով:

37. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

(ա) Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)

Փոփոխությունները սահմանափակում են սկզբնական ճանաչման ժամանակ կիրառվող բացառության շրջանակը՝ բացառելու համար այն գործարքները, որոնք առաջացնում են հավասար և հաշվանցվող ժամանակավոր տարբերություններ, օրինակ՝ վարձակալության և ապագործարկման պարտավորությունների դեպքում: Փոփոխությունները գործում են 2023թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վարձակալությանը և ապագործարկման պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է ճանաչվեն ներկայացված ամենավաղ համադրելի ժամանակաշրջանի սկզբից՝ ցանկացած կուտակային հետևանքը ճանաչելով որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների ճշգրտում այդ ամսաթվի դրությամբ: Մյուս բոլոր գործարքների համար փոփոխությունները կիրառվում են այն գործարքների նկատմամբ, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբից հետո:

Խումբը հաշվառում է վարձակալության և ապագործարկման պարտավորությունների գծով հետաձգված հարկը՝ կիրառելով «ամբողջապես կապակցված» մոտեցումը, ինչը հանգեցնում է փոփոխությունների նման արդյունքի: Փոփոխությունների ընդունումն ազդեցություն չի ունենա չբաշխված շահույթի վրա:

(բ) Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ դասերի (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)

2020թ-ին հրապարակված փոփոխությունները նպատակ ունեն պարզաբանել պարտավորության ընթացիկ կամ ոչ ընթացիկ լինելը որոշելու պահանջները և կիրառելի են 2023թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Այնուամենայնիվ, ՀՀՄՄԽ-ն հետագայում առաջարկել է ՀՀՄՍ 1-ի լրացուցիչ փոփոխություններ և 2020թ. փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետի հետաձգում մինչև 2024թ. հունվարի 1-ը: Այս շարունակական զարգացումների պատճառով Խումբը չի կարող որոշել այդ փոփոխությունների ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա սկզբնական կիրառման ժամանակաշրջանում: Խումբը հետևում է զարգացումներին:

(գ) Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- ՖՀՍՄ 17 *«Ապահովագրության պայմանագրեր»* և ՖՀՍՄ 17 *«Ապահովագրության պայմանագրեր»* փոփոխություններ
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործնական առաջարկներ 2 փոփոխություններ)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ)